

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուլգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS). 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY). 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գաբրիելի Միլևանյան, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 Էջ + 16 Էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 Էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Գեղամ Բադայան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵՒՆ [ՍԱԵՐԱԿԻ, ՋԵՐՄՈՒԿԻ, ՄԻՊԻԱԹԻ, ՄԾԲԻՆԻ (ՆԻՍԻԲԻՆ) և ՎԵՐԱՆՆԵԻԻՐԻ գա- վառները]

Հիմնաբառեր. Սաերակ (Սեաւաւերակ), Կարաջա-
դաղ (Սեւ լեառն), Հադդո (Բուջաղ), Հոշին, Ջերմուկ (Չերմիք),
Չնքուշ (Շենքուշ), Սիրահայաց Սբ Աստվածածին, Կեսկես
(Կիսկիս), Միդիաթ, Մծբին (Նիսիբին), Վերաննեիիր (Գորա-
նուպոյիս):

Հոդվածը թեմային նվիրված նախորդ երկուս ուսումնասիրությունների¹ շարունա-
կությունն է, որով ավարտվում է Առաջին աշխարհամարտի նախօրեին Դիարբեքիրի վիլա-
յեթի հայ բնակչության պատմաժողովրդական կացության ուսումնասիրությունը: Այս ան-
գամ անդրադարձել ենք Սաերակի սանջակի համանուն և Վերաննեիիրի, Արղանա-Մադենի
սանջակի Ջերմուկի (Չերմիք), ինչպես նաև՝ Մարդիսի սանջակի Միդիաթի և Մծբինի (Նի-
սիբին) գավառներին:

Ցանկանում ենք կրկնել, որ նշված գավառները ևս էական թերություններով են ներկա-
յացված Դիարբեքիրի (Տիգրանակերտ) առաջնորդարանի 1913-1914 թթ. տեղեկագրե-
րում, որոնք պայմանականորեն անվանել ենք առաջին² և երկրորդ³: Նշենք, որ առաջին տե-
ղեկագրում գետեղված են համեմատաբար ավելի նոր տվյալներ, մինչդեռ երկրորդում ներ-
կայացված են 1890-ականների ժամկետանց, ավելին՝ լիովին աղճատված ցուցանիշներ⁴:
Անհամեմատ մանրամասն ու բովանդակալից են Ջերմուկի գավառի Չնքուշ և Ջերմուկ գյու-
ղաբաղաբներին վերաբերող տեղեկությունները: Այդ տեսանկյունից առանձնանում է
սփյուռքի հայտնի «Կռունկ» շաբաթաթերթի հիմնադիր և բազմամյա խմբագիր-տնօրեն Գ.
Գևորգյանի (Գեորգեան) բնօրրանին նվիրված հատորը, ուր հեղինակը մեծ ջանադրու-
յամբ հավաքել է (հայրենակիցների աջակցությամբ) և վերջնական կորստից փրկել հսկա-
յական նյութ⁵: Հարկ է նշել, որ մինչ այդ Չնքուշին նվիրված մեկ այլ աշխատություն էր հրա-
տարակել նաև Մ. Փոլսուլյանը⁶: Ընդ որում, հեղինակի համար որպես սկզբնաղբյուր են եղել

* Հոդվածը ներկայացվել է 06.11.2020 թ., գրախոսվել՝ 01.12.2020 թ., ընդունվել տպագրության՝
15.12.2020 թ.:

¹ Տե՛ս «ՎԷՆ», Ե., 2020, № 1 (69), էջ 154-200: № 2 (70), էջ 112-158:

² Տե՛ս Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille de
Genocide, Paris, 1992: Raymond H. Kévorkian, Demographic Changes in the Armenian Population of Diarbekir,
1895-1914. - «Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa», edited by Richard G. Hovannisian, Costa Mesa,
California, 2006.*

³ «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտայի տարին», աշխատասիրեց եւ խմբագրեց
Թէոդիկ, Պոստոն, 1980: Հմմտ. նույն գրքի 2014 թ. Թեհրանի հրատարակությունը:

⁴ Դրանք լիովին համընկնում են նշված ժամանակ հրատարակված մի վիճակագրության տվյալների հետ:
Տե՛ս Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты. - «Положение армян в Турции до вмешательства
держав в 1895 году», М., 1896, էջ 100-101: Սա ևս մեկ անգամ հաստատում է մեր այն կարծիքը, որ Տիգ-
րանակերտի առաջնորդարանը ցեղասպանության նախօրյակին նոր վիճակագրական տեղեկագիր չէր կապել
և հենվում էր ժամկետանց տվյալների վրա:

⁵ Տե՛ս Գեորգեան Գ., Չնքուշապատում: Քննական պատմություն Հայոց Չնքուշի, հտ. Ա. տեղագրական-պատ-
մագրական-վշակությանի-բանահիւսական-ապագրական, Երուսաղեմ, 1970: Հեղինակն օգտագործել է նաև
Չնքուշի թեմի առաջնորդ, իսկ 1697-1704 թթ.՝ Երուսաղեմի Հայոց պատրիարք Մինաս Համդեցու ձեռագիր
«Օրագրութիւն» աշխատությունը, ուր հանդիպում է պատմաաշխարհագրական բնույթի մեծաքանակ և ուշա-
գրավ նյութ:

⁶ Տե՛ս Մանուկ Թ. Փոլսուլեան, Դրուագներ Չնքուշի անցեալէն, Հալէպ, 1929:

գերազանցապես ժողովրդական բանավոր զրույցներն ու պատմությունները և անձնական հիշողությունները: Թերևս դա է պատճառը, որ նրա մոտ հանդիպում են ժամանակագրական անճշտություններ և աղճատումներ: Այդ պատճառով առկա է որոշակի շփոթ, ինչը դժվարություններ է ստեղծում հատկապես իրադարձությունների ժամանակագրությունը ճշտելիս: Դրանով հանդերձ Մ. Փուսուլյանը գրանցել է իր բնօրրանին նվիրված այնպիսի հազվագյուտ փաստեր և իրադարձություններ, որոնք բացակայում են Գ. Գևորգյանի գրքում, հետևաբար՝ զուրկ չեն պատմական հետաքրքրությունից: Ձերմուկ գյուղաբաղաբի մասին հետաքրքիր և եզակի տեղեկություններ է հաղորդում Ս. Պարսամյանը՝ ծննդավայրին նվիրված իր աշխատության մեջ⁷: Նույն բնակավայրի մասին ուշագրավ տվյալներ են հաղիպում նաև Մուշեղ վարդապետի հոդվածաշարում⁸: Եզակի են Ս. Թովմայանի տեղեկությունները Ձերմուկի գավառի Կեսկես ավանի մասին⁹: Սևերակ բաղաբի մասին ուշագրավ տվյալներ է հաղորդում մեր կողմից նախորդ հոդվածներում բազմիցս հիշատակված ռուսական հետախուզության փոխգնդապետ Տոմիլովը¹⁰: Չնայած առանձին անճշտություններին, որոշակի կարևորություն ունի Ս. Արաբյանի (Արապեան) հայրենի Սևերակին նվիրված գիրքը¹¹: Վերոհիշյալ գավառների տարածքում գտնվող հայկական և ասորական սրբավայրերի (վանքեր, եկեղեցիներ, ուխտատեղիներ ևն) մասին ուշագրավ տեղեկություններ կան մի շարք հեղինակների գործերում¹²: Առանձին, բայց կարևոր տեղեկություններ են հանդիպում նաև Ս. Ծոցիկյանի, Ա. Սահակյանի և Ս. Չուլջյանի (Չուլճեան), ինչպես նաև Ն. Պաղտոյանի աշխատություններում¹³: Ինչպես նշել ենք, թեմայի լուսաբանման համար խիստ կարևոր են նաև անգլերեն ու ֆրանսերեն հասու որոշ սկզբնաղբյուրներ և առանձին հեղինակների աշխատություններ: Դրանք շահեկան տեղեկություններ են հաղորդում մասնավորապես Միդիաթում և Մծբինում քննարկվող ժամանակահատվածում ձևավորված ժողովրդագրական իրավիճակի մասին¹⁴:

⁷ «Յուշարձան Ձերմուկի», գրեց Սարգիս Գ. Պարսամյան, Պոսթըն, 1969:

⁸ Տե՛ս Մուշեղ վարդապետ, Լօթեր: Ձերմուկ - «Արևելք» օրաթերթ, Կ. Պոլիս, ԺԹ տարի, թիվ 5045:

⁹ «Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)», գրեց Թովմաս Գ. Մկրտիչեան (անգլիական նախկին դեր-հիւպատոս Տիգրանակերտի), Գահիրէ, 1919:

¹⁰ «Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника Томилова в 1904 году, часть первая: Район Багдадской железной дороги от Аданы до Мосула»: Նույնի՝ «Подробные маршрутные описания пройденных путей от Кавказа через Курдистан и Месопотамию к Средиземному морю», С. - Петербург, 1907.

¹¹ Տե՛ս Արապեան Ս. (Սևերակցի), Յուշամատան Սևերակի, Պէրոլթ, 1971:

¹² Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին: Ասիա, հտ. Ա, Վենետիկ, Ս. Ղապար, 1806: «Թորոս աղբար», գրեց Գ. Վ. Սրուաձտեանց, մասն Բ, Կ. Պոլիս, 1885: Յմնտ. Սրվանձտյանց Գ., Երկեր, հտ. 2, Ե., 1982: Ոսկեան Յ., Սեբաստիայի, Խարթերի, Տարապէթի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962: Տրդատ եպս Պալեան, Հայ վանտարայք, Սբ Էջմիածին, 2008: Սաֆրաստյան Ա. Խ., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների միջնորդության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, «Էջմիածին», 1965, թիվ Ժ; 1966, թիվ Ա:

¹³ Տե՛ս Ծոցիկեան Ս. Ս., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորթ, 1947: «Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները», աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Պէրոլթ, 1955: Չուլճեան Ս., Պատմություն Ատիամանի: Ինքնակենսագրություն, Ե., 2004: ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1398 (Ն. Պաղտոյանի անտիպ աշխատությունը, որը վերնագրված է «Մեր հաւանական հարսալայի նահանգները»):

¹⁴ «Turkey and the Armenian Atrocities», by Rev. Edwin M. Bliss, Fresno, California, 1896. Mark Sykes, *The Khalif's Last Heritage. A Short History of the Turkish Empire*, New York, 1973 (1915 թ. Լոնդոնում հրատարակված գրքի արտասուպությունը): «A Handbook of Mesopotamia», vol. IV: Northern Mesopotamia and Central Kurdistan, Admiralty War Staff, Intelligence Division, April, [London], 1917. «Diary of Major E. Noel on Special Duty: Memorandum», 1919 (ս. ս.). David Gaunt, with assistance of Jan Bet Sawoce and an appendix of documents prepared by Rasha Donef, *Massacres, Resistance, Protectors. Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I*, Gorgias Press, New Jersey, 2006. Sarkis Y. Karayan, M. D., *Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic and Demographic Gazetteer*, London, 2018. «Les missions catholiques», tome quarante-sixième (janvier-décembre 1914), 1915 (ս. ս.). Yves Ternon, *Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction*. - «Revue d'histoire Arménienne contemporaine», tome IV: numéro special, Paris, 2002.

ՍԵՎԵՐԱԿԻ (ՍԵՎԵՐԵԿ, ԹՐԶ.՝ SİVEREK) ԳԱՎԱՌ

Գրավում էր Եփրատից մինչև Կարաջադաղի (պատմ.՝ Աշիմուն, ըստ Ղ. Ինճիճյանի՝ «Սեալ լեռն») լեռնազանգվածը ձգվող Դիարբեքի վիլայեթի արևմտյան շրջանները: Սահմանակից էր հյուսիսից՝ Ջերմուկի (Չերմիք), արևելքից, Կարաջադաղի ջրբաժանով՝ Դիարբեքի կամ Կենտրոնական, հարավ-արևելքից՝ Վերանշեհի (Եսիշեհի) գավառներին, հարավ-արևմուտքից՝ Ուրֆայի ինքնուրույն սանջակին, իսկ արևմուտքից, Եփրատի հունով՝ Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) վիլայեթին: Կենտրոնը, Դիարբեքից շուրջ 80 կմ հվ-արմ, առևտրական բանուկ ճանապարհին գտնվող, **Սևերակ** (<Սեալաևերակ) քաղաքն էր, որը կառուցված էր Կարաջադաղի և Եփրատի միջև տարածվող հրաբխային սարահարթի կենտրոնում՝ ամբողջովին շրջապատված խաղողի ու այլ մրգատու այգիներով¹⁵: Գործում էր **Կաթողիկե Սբ Թորոս** կամ **Սբ Թեոդորոս** առաքելական հիմնադրոց եկեղեցին: Եկեղեցի ունեին նաև կաթոլիկ հայերը (անունը հայտնի չէ): Սևերակում կար հայկական 6 դպրոց, որից 3-ը պատկանում էր առաքելական (350 աշակերտ), 2-ը՝ կաթոլիկական (130 աշակերտ), իսկ 1-ը՝ ավետարանական (բողոքական) համայնքներին¹⁶: Որոշակի բարդությունների հետ է կապված քաղաքի հայ բնակչության թվի ճշգրտումը, քանի որ մեզ հասու աղբյուրները սակավաթիվ են, իսկ հաղորդած տեղեկությունները՝ ոչ ամբողջական, հաճախ՝ հակասական կամ իրարամերժ: Այդ պատճառով ցեղասպանության նախօրեին քաղաքի հայ բնակչության թիվը որոշելիս ելակետային ենք ընդունել փոխգնդապետ Տոմիլովի տվյալները, որոնց համաձայն 1904 թ. Սևերակում ապրում էր 650 տուն հայ¹⁷ (մեր հաշվարկով՝ ավելի քան 4000 բն.-Գ. Բ.): 1914 թ. Տիգրանակերտի (Դիարբեքի) առաջնորդարանի 1-ին տեղեկագրի համաձայն Սևերակի հայ բնակչությունն արդեն 5450 մարդ էր¹⁸ (տարեկան միջին աճը՝ ավելի քան 3.6 %): Այս ցուցանիշը պետք է ընդունել իրականությանը մոտ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ քաղաքի հարմար դիրքի շնորհիվ այստեղ մեծ թվով հայկական ընտանիքների մշտական ներհոսք կար Չնքուշից, Ջերմուկից, իսկ 1910 թ. ընտանիքներ հաստատվեցին նույնիսկ Մուշից¹⁹: Զաղաքում բնակվում էին նաև զգալի թվով հակոբիկյան ասորիներ, որոնք ունեին առանձին եկեղեցի²⁰: Բացի այդ, միջին դարերում Սևերակում ապրել են «հույներ» (այն է՝ հունադավան հայ-հոռոմներ-Գ. Բ.), որոնց **Սբ Քառասուն Մանկունք** եկեղեցին 16-րդ դ. թուրքերը

¹⁵ Տե՛ս Ինճիճյան, *Նշվ. աշխ.*, էջ 226-227: Հմմտ. *Томилос, Նշվ. աշխ.*, մաս 1, էջ 263: Մաս 2, էջ 184-185: Հատկանշական է, որ 1437 թ. գրված մի Ավետարանում քաղաքը հիշատակվում է որպես «վայելուչ տեղիս որ կոչի Սեւերաք»: Տե՛ս Ոսկեան, *Նշվ. աշխ.*, էջ 179-180:

¹⁶ Տե՛ս Kévorkian, Paboudjian, *Նշվ. աշխ.*, էջ 400: Kévorkian, *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir*, p. 268.

¹⁷ Տե՛ս *Томилос, Նշվ. աշխ.*, մաս 2, էջ 184:

¹⁸ Տե՛ս Kévorkian, Paboudjian, *Նշվ. աշխ.*, էջ 400: Kévorkian, *Նշվ. աշխ.*, էջ 268:

¹⁹ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 84: Արապեան, *Նշվ. աշխ.*, էջ 426: Առաջնորդարանի 2-րդ տեղեկագրում Սևերակ քաղաքի հայերի թիվը նշված է 400 տուն (1350 բն.), ինչը խիստ թերհաշվառված ցուցանիշ է: Տե՛ս «Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին 1915 աղետայի տարին», էջ 379-380: Ի դեպ, նշված աղբյուրի տվյալներից այն տպավորությունն է ստեղծվում, իբր անձերի ցուցանիշը գավառի ողջ հայության թվաբանակն է: Վերջինս ոչ միայն ճիշտ չէ, այլև բացահայտ աղավաղում է: Կցանկանայինք նաև որոշ պարպաբանումներ անել թ. Արապյանի հաշվարկների վերաբերյալ: Անդրադառնալով Սևերակի վիճակագրությանը, հեղինակը քաղաքի հայերի թիվն «առաջին աշխատամարտէն առաջ» ցույց է տալիս 14500 մարդ (տես Արապեան, *Նշվ. աշխ.*, էջ 215: *Նույն հեղինակի մեկ այլ տվյալով՝ 15250 բն.: Նույն տեղում, էջ 34*): Ընդ որում, գրքի 21-րդ էջում հեղինակը Սևերակի հայ բնակչության համար նշել է 14500 տուն (!), որը տպագրական բացահայտ աղավաղում է, ինչն ընդունել է թ. Արապյանը Բեյրութում 1973 թ. Ս. Կարայանի հետ ունեցած մասնավոր հարցապրոցի ժամանակ:

²⁰ Փոխգնդապետ Տոմիլովի տվյալներով 20-րդ դ. սկզբին քաղաքի ասորիների թիվը կազմել է 350 տուն: Տե՛ս *Томилос, Նշվ. աշխ.*, մաս 2, էջ 184: Աղա Պետրոսի կողմից Փարիզի խորհրդածրոջով ներկայացրած տեղեկագրի համաձայն Սևերակի ասորիների թիվը կազմել է 1200 բն.: Տե՛ս Gaunt, *Նշվ. աշխ.*, էջ 261, 423: Մեր կարծիքով, իրականում քաղաքի ասորի բնակչության թիվն Առաջին աշխարհամարտի նախօրեին պետք է կազմեր առնվազն 2000 մարդ (Գ. Բ.):

բռնագավթելով, վերածել էին մզկիթի՝ Ուլու ջամի անունով (թրք.՝ Սու Cami-«մեծ մզկիթ»)՝²¹: Սևերակի մոտակա բլրի վրա պահպանվել էին Օսրոյենեի կամ Եդեսիայի Աբգարյանների թագավորության ժամանակաշրջանի հնագույն բերդի ավերակները²² (թերևս՝ այստեղից է ծագել քաղաքի միջնադարյան անունը-Գ. Բ.):

Չգալի բարդություններ են առաջ գալիս նաև Սևերակի գավառի հայ բնակչության թիվը ճշտելիս: Բանն այն է, որ հասու աղբյուրներում բացակայում են հայաբնակ գյուղերի ամբողջական ցուցակները, իսկ եղածներն էլ պարունակում են հակասական տվյալներ: Պետք է ենթադրել, որ այստեղ ևս առկա էր հայ բնակչության մեծ շարժունակություն և նրա տեղաբաշխումը հաճախակի է փոխվել, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծել քիչ թե շատ ստույգ հաշվառում անցկացնելիս: Այսպես, Տիգրանակերտի (Դիարբեքիր) հայոց առաջնորդարանի վիճակագրության 1-ին տեղեկագրում Սևերակի գավառում գրանցված է հայաբնակ 15 գյուղ²³: Մինչդեռ 2-րդ տեղեկագրում, առանց որևէ լրացուցիչ վիճակագրական տեղեկություններ հաղորդելու, թվարկվում են միայն 7-ը, ընդ որում՝ դրանցից միայն երկուսն են (Յոշին և Մագրա) կրկնվում 1-ինի գյուղաշարքում²⁴: Բացի այդ, 1-ին տեղեկագրի համաձայն գյուղաբնակ հայերի թիվը 123 տուն էր (առավելագույնը՝ 1000-1200 մարդ), մինչդեռ 2-րդում՝ 3825 բնակիչ (տների մասին տեղեկությունները բացակայում են- Գ. Բ.): Ակներև է, որ առաջին դեպքում դարձյալ գործ ունենք հայ բնակչության բացահայտ թերհաշվառման հետ: Ի դեպ, Փարիզի Նուբարյան գրադարանում պահվող փաստաթղթերից մեկում Սևերակի (քաղաքի և գավառի) հայության մասին գրանցված ցուցանիշը՝ 11643 մարդ²⁵, արդեն 25.5 %-ով գերազանցում է առաջնորդարանի 1-ին տեղեկագրի տվյալները (9275 բն.)²⁶: Վիճակագրական տեղեկություններ են հանդիպում նաև Թ. Արապյանի գրքում, ուր թվարկված են 8 «զուտ հայաբնակ» գյուղ, որոնցից 4-ը նույնպես որևէ այլ աղբյուրում չեն հանդիպում²⁷: Սակայն Արապյանի ցուցանիշները, ընդհակառակը, խիստ ուռճացված են՝ 1650 տուն կամ 16500 բն.²⁸: Ամփոփելով նշենք, որ մեզ հասու սկզբնաղբյուրների համաձայն քաղաքից բացի հայեր են ապրել նաև Սևերակի գավառի 26

²¹ Տե՛ս Արապեան, *Նշվ. աշխ.*, էջ 23, 45:

²² Տե՛ս *Томилос*, *Նշվ. աշխ.*, մաս 1, էջ 263: Մաս 2, էջ 184:

²³ Տե՛ս «Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին», էջ 381:

²⁴ Տե՛ս Kévorkian, Paboudjian, *Նշվ. աշխ.*, էջ 400: Kévorkian, *Նշվ. աշխ.*, էջ 268: Այս առումով նշենք, որ մեզ մոտ այն տպավորությունն է, որ նշված են միայն եկեղեցիներ ունեցող բնակավայրերը (Գ. Բ.):

²⁵ Տե՛ս Թաթոյան, *Նշվ. աշխ.*, էջ 109:

²⁶ Ն. Պաղտոյանի 1919 թ. տեղեկագրի համաձայն Սևերակի գավառը («սանճագ»), որի կապմում հեղինակը նշում է Վերանշեհիր, Սևերակ («Սեվերեկ»), Չնքուշ («Չընկուշ») և Ջերմուկ «գաւառակները» (իմա՝ գավառները, թրք.՝ kaza- Բ.Գ.), 1915 թ. նախօրեին ուներ 30000 հայ բն.՝ տեղաբաշխված «50ի մօտ զուտ հայաբնակ» (՝) գյուղերում, իսկ «40է աւելի գեղեր իբր ագարակ հայերուն կը պատկանէին»: Տե՛ս ՅԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1398, թ. 38: Փաստորեն, խոսքը վերաբերում է Սևերակի սանջակին, ընդ որում, մինչև 1914թ. սահմաններում (ընդ-գծումը մերն է-Գ.Բ.), երբ վերջինիս կապմում՝ բացի բուն Սևերակի և Վերանշեհիրի (Ենիշեհիր) գավառներից, մտնում էր նաև Ջերմուկը՝ հայաշատ Չնքուշի հետ: Ցավոք, այլ մանրամասներ հեղինակը չի հաղորդում ինչպես հայերի թվի՝ ըստ առանձին գավառների, այնպես էլ հայաբնակ գյուղերի և «ագարակների» մասին: Ինչ խոսք, դա զգալի պարզաբանումներ կմտցներ հատկապես Սևերակի գավառի հարցում, որն առավել հայաշատն էր վերոհիշյալ վարչամիավորների շարքում: Նշենք նաև, որ Է. Նոյեյի ոչ ամբողջական հաշվարկներով, 1914 թ. Սևերակի և Ջերմուկի գավառներում հայերի թիվը կապմում էր ավելի քան 22000 բն. (հաշվարկել ենք նաև Չնքուշի հայ-կաթողիկե համայնքը- Գ. Բ.): Տե՛ս "Diary of Major E. Noel", էջ 12-13:

²⁷ Տե՛ս Արապեան, *Նշվ. աշխ.*, էջ 21, 58-61: Յեղիակի կողմից հիշատակված են հետևյալ գյուղերը (պահել ենք հեղինակի ուղղագրությունը)՝ Մըսեպին, Պագճարի (նաև՝ Պէքէրի, Պէգճէրի), Յալապի (Յալէպի), Յոշին, Մապրա, Յատրոյ (Յատրօ), Խալլոբան, Սումազի (Սիմաբի): Սակայն Թ. Արապյանի «զուտ հայաբնակ գյուղեր» արտահայտությունը որոշակի վերանայման կարիք ունի, քանի որ 1919 թ Փարիզի խորհրդածողովին ներկայացված ասորական պատվիրակության տեղեկագրի հաղորդումներով նշված գյուղերից զոնե 4-ում բնակվել են նաև ասորիներ: Տե՛ս Gaunt, *Նշվ. աշխ.*, էջ 423:

²⁸ Տե՛ս Արապեան, *նույն տեղում*: Ս. Կարայան, ըստ Էության, նույնությամբ ընդունում է Թ. Արապյանի տվյալները (տես Karayan, *Նշվ. աշխ.*, էջ 297-298): Ի դեպ, Ռ. Թաթոյանը Թ. Արապյանի տվյալները ներկայացրել է աղավաղված ձևով՝ նշելով, որ Սևերակի «շրջակա ութ գյուղերում» իբր բնակվել է 1650 «զունչ» հայ: Տե՛ս Թաթոյան Ռ., *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին*, Ե., 2015, էջ 109:

գյուղական բնակավայրերում²⁹, և մեր հաշվարկներով, նրանց ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 15000 մարդ³⁰: Հայաբնակ գյուղերը գերազանցապես հանդիպում էին մերձեփրատյան **Հադրոյի** (Բուջակ) և **Հոշինի** (Օշին) գավառակներում: Առավել հայաշատ գյուղերն էին՝ **Բագջարի** (Պաղջրի^օ), **Խալլոթան** (թրք.՝ Hallukent), **Խարզըն** (Ազրո), **Հադրո**, **Հալեպի** (Հալաբի), **Հոշին** (Օշին), **Մագրա** (Մեգրե), **Սծբին** (Մըսեպին, Նիսիպին), **Սմախի** (Սմաքի): Հարկ է նշել, որ նախկինում հայաբնակ գյուղեր հանդիպել են գավառի գրեթե ողջ տարածքում: Այս առումով ուշագրավ է Ղ. Ինճիճյանի այն վկայությունը, որ 18-րդ դ. վերջին-19-րդ դ. սկ. Սևերակի կառավարչի («պեյ») իշխանության ներքո գտնվել է հայերի և քրդերի կողմից բնակեցված «բազմութին գիւղօրէից»³¹: Ուշագրավ են նաև Գ. Սրվանձտյանցի տվյալները, որոնց համաձայն Սևերակի հյուսիսարևելյան սահմանագլուխը կազմող Կարաջադաղի հյուսիսային ստորոտներին ընկած **Ալմադին** (թրք.՝ Elmadin), **Գյավուրթոյ** (Կավուրթոյ, թրք.՝ Gâvurköy), **Դողան** (Տողան)³², **Խանգեղ**, **Ղուլֆախիր** (թրք.՝ Kulfakir) և **Քարթիլ** (թրք.՝ Kertil) այլազգաբնակ գյուղերում 1870-ական թթ. վերջին դեռ պահպանվել էին հայկական սրբավայրերի մնացորդներ³³: Խնդրի լուսաբանմանը հատկապես օգնում է քարտեզագրական նյութը, որի հիման վրա հաջողվել է Սևերակի գավառի տարածքում բացահայտել ևս 3 տասնյակից ավելի գյուղական բնակավայրեր և այլ բնույթի աշխարհագրական տեղավայրեր (գետեր, լեռներ), որոնք պահել են հայահունչ անվանումները կամ վերջիններս հուշում են դրանց հայկականությունը³⁴. **Ամբար**-Ապար^օ (թրք.՝ Anbar, Եփրատի ձախակողմյան համանուն վտակներից մեկը, որի գետաբերանի մոտ գտնվում է Նույնանուն գյուղը)³⁵, **Բախսոր** (Bahsor) <Փախձոր կամ Պախձոր, **Գյավուրջա** (թրք.՝ Gâvurca, բառացի՝ «անհավատի (իմա՝ հայի) գյուղ»), **Գյուլփ**-Կոռք, **Գյուրգյուռ** (թրք.՝ Körtör) <Գրգուռ, **Դավիթ** (Եփրատի ձախակողմյան Ամբար վտակի ափին բարձրացող բլուր), **Դելիսաչ**, **Չանգաթիլ**

²⁹ Ս. Կարայանի հաշվարկներով Սևերակի գավառում Մեծ եղեռնի նախօրեին հայերը բնակվել են 22 բնակավայրերում: Տե՛ս Karayan, նշվ. աշխ., էջ 297-298:

³⁰ Թ. Արաայանը Ս. Կարայանի հետ ունեցած պրոյեցում (տես 5-րդ ծանոթությունը) տեղեկացրել է, որ 1954 թ. ծննդավայր կատարած ուղևորության ընթացքում քաղաքի հայերի մասին իրեն վիճակագրական տեղեկություններ է փոխանցել մի թուրք պաշտոնյա (Իսմայիլ Հաջի), ով դրանք վերցրել է պահպանված օսմանյան հաշվառման մատյաններից: Ըստ այդմ, Առաջին աշխարհամարտի նախօրեին Սևերակ քաղաքում ապրել է 15250 հայ բնակիչ (տես Karayan, նշվ. աշխ., էջ 268): Սակայն այդ դեպքում վերջինիս ողջ բնակչությունը պետք է կազմեր խիստ ուռճացված մի թիվ՝ 45000-50000 մարդ, քանի որ մեր կողմից արդեն հիշատակված փոխզնդապետ Տոմիլովի հաշվարկներով, հայերը կազմում էին քաղաքի բնակչության շուրջ 1/3-ը: Ի դեպ, չմոռանանք նշել, որ 1955 թ. (իմա՝ ցեղասպանությունից 40 տարի անց) Սևերակ քաղաքի բնակչությունը մի փոքր էր միայն գերազանցում 21000-ը (տես «Türkiye ansiklopedisi», cilt 5, Ankara, 1957, էջ 149): Մեր կարծիքով Թ. Արաայանին փոխանցված վերոնշյալ վիճակագրական տվյալներն իրականում արտացոլում էին ամբողջ Սևերակի գավառի հայ բնակչության թիվը (ընդգծումը մերն է- Գ. Բ.), որոնք թյուրիմացաբար ներկայացվել են միայն քաղաքի համար: Կարծում ենք նույն ելրահանգմանը կարելի է հանգել Սևերակ քաղաքի բնակչության թվին վերաբերող հեղինակի տվյալների քննարկումից, որոնք իրականում կրկին արտացոլում են գավառի ազգային կազմը. ողջ բնակչությունը՝ 39500-40000 բն., որից 15250 հայ (3 համայնքներից), 1000 ասորի, 250 հրեա, 13000 թուրք, 7000 քուրդ, 3000 զապա (ընդգծումը մերն է-Գ. Բ.): Տե՛ս Արապեան, նշվ. աշխ., էջ 34:

³¹ Տե՛ս Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 228: Պոլսո պատրիարքարանի 1834 թ. վիճակագրության ընթացքում քաղաքի հետ (հայերի թիվը՝ 300 տուն) հաշվառված են միայն Հադրո («Ատրո»), Խարզըն («Ալբո») և Գյուրգյուրեյ («Կիւնկէօրմէյ») գյուղերը: Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Թ. Ավատյանի ֆոնդ, բաժին 4-րդ, վավերագիր № 224, թ. 145:

³² Կարծում ենք որոշակի կապ կա գյուղանունի և Դողանյան (Տողանյան) ազգանվան միջև: Ի դեպ, Չերմուկի Էնգեչ (Ականճ) գյուղի հարևանությամբ գտնվում է Նույնանուն մեկ այլ գյուղ (թրք.՝ Toğan): Տվյալների պակասը, սակայն, հնարավորություն չի տվել վերջնականապես պարզելու արդյո՞ք նշված բնակավայրը նախկինում հայաբնակ է եղել (Գ. Բ.):

³³ Տե՛ս Սրվանձտյանց, Երկեր-2, էջ 418:

³⁴ Օգտվել ենք Թուրքիայի Հանրապետության և նախկին ԽՍՀՄ ՉՈՒ համապատասխան տոպոգրաֆիկներից (մասշտաբ՝ 1:200000):

³⁵ Հմնտ. Հայնիի Նույնանուն գյուղը (ի դեպ, նախկինում հայաբնակ): Տե՛ս «ՎԷմ», ԺԲ(ԺԸ) տարի, № 1(69), Ե., 2020, էջ 189:

(թրք.՝ Zengecil)՝ Ճաղկաթիլ, **Չանգետր** (Зенгетор)³⁶ կամ **Չանգչուր** (թրք.՝ Zenkçur Suyu)՝ Ճաղկաձոր կամ Ճաղկաջուր (Սևերակի հյուսիսային կողմով հոսող Եփրատի ձախակողմյան վտակներից)³⁷, **Չիմակ** ՝ Ճմակ, **Թիլ** (Մեծ Թիլ), **Թիվերեկ** (թրք.՝ Tive-rek)՝ Դեւաւերակ³⁸, **Թումաթիլ** (թրք.՝ Tümetil)-Թումա՝Թովմա+թիլ³⁸, **Խարբիք** (խարաբեք, թրք.՝ Harbik), **Խարմանեկ** (Հարմանիկ), **Խոշխոշիկ**, **Խոփ** (թրք.՝ Hop), 2-րդ **Խոփ** կամ **Քաֆ**, **Կորչիկ**՝ Կորճեք³⁹ (արևելքում բարձրանում է Նույնանուն լեռնազագաթը), 2-րդ **Կորչիկ**՝ Կորճեք³⁹ (թրք.՝ Körçik), **Չամուկ** (թերևս հայահունչ կարելի է համարել Չամուկից մի փոքր հվ-արլ գտնվող Karisor – Քարիձոր⁴⁰ բնակավայրը), **Չարսուկ** (թրք.՝ Harsük), **Չերիերի** (թրք.՝ Herheri), **Չոստուր** (թրք.՝ Hostur), **Ճապաղջուր** (թրք.՝ Çapakçur), **Մարքիկ**՝ Մարգք (թրք.՝ Markik), **Մերգիսոր**՝ Մարգիձոր (Եփրատի ձախ ափին բարձրացող բլուր), **Չերմիշ**՝ Չերմ (ի)+էշ (թրք.՝ Çermiş), **Չորթանեկ** (թրք.՝ Çortanek), **Պակագի** (թրք.՝ Fak)³⁸, **Չնգըշի** (ճնկըշի)³⁹, **Սինակ** (թրք.՝ Sinek), **Վիրիգոտիկ** ՝ Վերիգոտիկ (Եփրատի ձախափնյա Չայդերե վտակի աջ ափին բարձրացող բլուր), **Քորթսոր** (թրք.՝ Kortsor)՝ Կորդձոր⁴⁰, **Քարաֆիրիկ** (թրք.՝ Karafirik)՝ Քարավերակ⁴⁰, **Քարուտ** (թրք.՝ Kârut):

1915 թ. Սևերակ քաղաքի և գավառի հայ բնակչությունը ենթարկվեց զանգվածային բնաջնջման: Ե. Նոյելի տվյալներով Սևերակ քաղաքից փրկվել էր 100, իսկ գավառից՝ 500 հայ⁴⁰: Ավելին, Սևերակի գավառի տարածքը երիտթուրքական հանցագործ իշխանությունների կողմից վերածվեց նաև Պոնտոսից և Փոքր Հայքից (Սեբաստիա) տեղահանված ավելի քան 100000 հայերի ոչնչացման կենտրոններից մեկը⁴¹: 1929 թ. Սևերակում (ամենայն հավանականությամբ՝ քաղաքում- Գ.Բ.) ապրում էին միայն 49 հայեր, որոնցից 34-ը՝ «թրքացած»⁴²:

ՍԵՎԵՐԱԿԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԸ

	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Բագջարի (Բեգջերի, Պեգճերի, Պաղջրի ⁴⁰)	եկեղեցի	1	
2	Գյունգյորմեզ			
3	Դաշլի (Թաշլուք)			
4	Խալլուքան (թրք.՝ Hallukent)			
5	Խարբի (Ղարբի)			
6	Խարզընտ (Ազրո, Հազրո)			Շրջակայքում կային սրբազան ծառերի

³⁶ Տե՛ս «Турция.Общегеографическая карта», масштаб – 1:200000, Москва, 1989:

³⁷ Հմմտ. Մշո և Գենջի սահմանագլխին գտնվող Ճաղկունք գյուղանունը, որը վերածվել է Չանգթի:

³⁸ Ղ. Ինճիճյանը հիշատակում է որպես խառը բնակչությամբ բնակավայր: Գտնվում էր Եփրատի ձախափնյակում բարձրացող Fakziyareti լեռնազագաթի հյուսիսային ստորոտին և կառավարվում փնկորական կառավարչի՝ վոյվոդայի կողմից: Տե՛ս Ինճիճեան, Նշվ. աշխ., էջ 228: «Վոյվոդա» բառը (թրք.՝ voyvoda) փոխառություն է բուլղարերենից և սերբերենից: Միջնադարյան Բուլղարիայում և Սերբիայում այսպես էին կոչվում քաղաքների կամ գավառների կառավարիչ իշխանները: 14-15-րդ դդ., նվաճելով Բալկանյան թերակղզու երկրները, թուրքերը սկսեցին պահպանեցին այս պաշտոնը, որը փոխադրվեց նաև օսմանյան ասիական տիրույթներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստան: Ընդ որում, վոյվոդ էին կոչվում քրիստոնյա քաղաքապետները: Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 34, 36-37: Հմմտ. «Հայերեն բացատրական բառարան», հատոր չորրորդ, կազմեց Ստ. Մայիսատեանց, իսկական անդամ Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի, Ե., 1945, էջ 352:

³⁹ Գյուղի մասին տե՛ս Պարսամեան, Նշվ. աշխ., էջ 20: Ավելացնենք, որ Չնգըշիից 4-5 կմ արլ գտնվում էր Աղջաղալա (թրք.՝ Akçakale) բերդը, որը 16-17-րդ դդ. Դիարբեքիի Եյալեթի համանուն լիվայի (սանջակ) կենտրոնն էր: Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հտ. 2, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, էջ 219: Հմմտ. Ինճիճեան, Նշվ. աշխ., էջ 210:

⁴⁰ Տե՛ս “Diary of Major E. Noel”, էջ 12:

⁴¹ Տե՛ս «Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին», էջ 379:

⁴² Տե՛ս Аванесов С. С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963, с. 80.

				<p>ուխտավայր-պուրակներ՝ Սբ Գևորգ, Սբ Սարգիս, Սբ Գրիգոր Լուսավորիչ, Սբ Աստվածածին, Սբ Նշան: Հայտնի էր նաև ասորական Մորուֆա ուխտատեղին Եփրատի ափին:</p>
7	Խուրի (Գուրի, Կորի)	Սբ Սահակ		
8	Կարաբաղչե	Սբ Սիմեոն		
9	Կարաբրջիկ (Կարաբուրջ, թրք.՝ Karabörcek)			
10	Հադրո (Բուջակ)			
11	Հայբլուզ (թրք.՝ Elbelos)			
12	Հալեբի (Հալաբի)		1	
13	Հոզան (խոզան)			
14	Հոշին (Օշին)	Սբ Ստեփաննոս	1	
15	Ղուջաղ (Գուջաթ)			
16	Մագրա (Մեզրե)	Սբ Գևորգ	1	
17	Մըլլի Սարայ			
18	Մըմըն (Մըմընչին, թրք.՝ Mısmısı)			
19	Միատուն (Միատին, թրք.՝ Meyadin)			
20	Մծբին (Մըսեբին, Նիսիպին)	Սբ Աստվածածին	1	Մծբինի եկեղեցի էին հաճախում նաև մոտակա Խալլոբանի և Հադրոյի (ժամանակին՝ նաև Մագրայի) հայերը:
21	Նաջարոթ (Նաճարուկ)			
22	Չարթախ	Սբ Փրկիչ (Սբ Թորոս)		
23	Սիմախի (Սիմաբի)	Սբ Գրիգոր Լուսավորիչ		Գյուղը հիմնադրվել է 1910թ.՝ Դիարբեքիր-Սևերակ ճանապարհից 4 կմ հս:
24	Սիմաբի (Սըմագլի)			Գտնվում էր Հոշինից շուրջ 12 կմ հվ:
25	Քարբեկ (Խրբեթ, Քարբակ, թրք.՝ Karabiyik)	Սբ Մեսրոպ		
26	Օրխուզ (Երկուզ, թրք.՝ Orğız)			

ՃՆԹ.: Սևերակի գավառում 1914 թ. գործել է 3 հայկական դպրոց՝ 250 աշակերտով:

ՋԵՐՄՈՒԿԻ (ՉԵՐՄԻՔ) ԳԱՎԱՌ

Գտնվում էր Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսարևմտյան մասում՝ ընդգրկելով Եփրատի ձախակողմյան **Ջերմուկ** (Ջերմիք) վտակի⁴³ ավազանը: Գավառի մեջ էին մտնում նաև Կարաջադաղի հյուսիսային ստորոտին ընկած բնակավայրերը: Սահմանակից էր արմ-ից և հս-արմ-ից՝ Խարբերդի վիլայեթին, հս-արլ-ից՝ Մադենի, հվ-արլ-ից՝ Դիարբեքիրի, իսկ հվ-ից՝ Սևերակի գավառներին: Առաջին աշխարհամարտի նախօրեին գավառը վարչականորեն մտնում էր Արդանա-Մադենի սանջակի կազմի մեջ⁴⁴: Կենտրոնը Դիարբեքիրից շուրջ 90 կմ հս-արմ, համանուն գետի միջին հոսանքի ձախ ափին գտնվող **Ջերմուկ** կամ **Ջերմիք** (թրք.՝ Çermik, պատմ.՝ Աբառնե, նաև՝ Վադարշակուպոլիս) գյուղաքաղաքն էր, որը հնուց հռչակված էր «**Շողջուր**» (Ս. Պարսամյանի ստուգաբանությամբ՝ «շոգ ջուր») կոչվող բուժիչ հանքային աղբյուրներով, որոնք գտնվում էին բնակավայրից 2.5-3 կմ հեռավորության վրա⁴⁵: Ջերմուկը 17-18-րդ դդ. ժառանգական իշխանության (թրք.՝ ocaklık) կենտրոնն էր: 19-րդ դ. սկ. այն գավառի հետ միասին մտնում էր Hudut-ı Madenemini (բառացի՝ «հանքերի կառավարչի Սահման») անունը կրող մարզի կազմում⁴⁶: Ս. Պարսամյանի տվյալներով մինչև 1895 թ. գյուղաքաղաքն ուներ 600 տուն հայ բնակիչ⁴⁷: Ընդ որում, գյուղաքաղաքի հայ բնակչության զգալի մասն այստեղ էր հաստատվել 18-րդ դ.՝ 5 կմ հվ-արմ ընկած **Ջաբրման** կամ **Ջավուռման** գյուղից (տես նաև ստորև)⁴⁸: Ջերմուկի հայերը, համիդյան կոտորածների ընթացքում զգալի կորուստներ կրելով, ցրվեցին ավալյ վայրեր (Սևերակ, Դիարբեքիր և այլուր): Ճիշտ է, հետագա մի քանի տարիներին հայ բնակչությունը որոշ չափով համալրվեց հիմնականում Չլքուլից այստեղ հաստատված ընտանիքներով, սակայն 1915 թ. նրա թիվը չէր գերազանցում 350 տունը⁴⁹: Այս առումով հատկանշական են նաև Է. Նոյեյի տվյալները՝ 2500 հայ բնակիչ⁵⁰: Չայերի մեծ մասը բնակվում էր գյուղաքաղաքի **Չուխուր** (հյր.՝ «փոս») թաղում, ուր գտնվում էր 1875 կամ 1876 թթ կառուցված **Սբ Աբդելմսեհ** եկեղեցին⁵¹: Այստեղ մինչև 1915 թ. պահվում էր ձեռագիր «**Ջավուռմանա Աւետարանը**» (տես ստորև)⁵²: Չայաբնակ էին նաև **Բլուր** (Թափա) և **Բերդի** (Կալա) թաղերը: Գյուղաքաղաքում գործում էր հայկական դպրոց: Արևմտյան մասում պահպանվել էին Ջերմուկի միջնադարյան բերդի (թրք.՝ Kale) և հայկական եկեղեցու ավերակները⁵³: Բերդի ստորոտին մինչև 1915 թ. կանգուն էր հինավուրց, բայց ամայի **Սբ Աբդելմսեհ**

⁴³ Վերին հոսանքի շրջանում գետը հայտնի է նաև Սինակ (Սինակաջուր) անունով: Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 26:

⁴⁴ 1911-1913 թթ. Ջերմուկի գավառը ժամանակավորապես ընդգրկվել է Սևերակի սանջակի կազմում: Տե՛ս Kemal H. Karpat, *Ottoman Population. 1830-1914, Wisconsin, 1985, p. 176-177.*

⁴⁵ Տե՛ս Մուշեղ վարդապետ, Եթեր: Ջերմուկ - «Արևելք» օրաթերթ, Կ. Պոլիս, ԺԹ տարի, թիվ 5045: Ավելի մանրամասն տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 29-33:

⁴⁶ Տե՛ս Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 239:

⁴⁷ Վերապատվելի Է. Բլիսի տվյալներով նախքան համիդյան կոտորածները՝ 400 տուն հայ և 700 տուն «թուրք»: Տե՛ս Bliss, նշվ. աշխ., էջ 437:

⁴⁸ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 21, 36: Նշենք, որ մեկ այլ տվյալի համաձայն Ջերմուկում 1895-1896 թթ. նախօրեին ապրել է 1948 հայ բն.: Մեր կարծիքով այդ ցուցանիշը գրեթե համընկնում է Գ. Սրվանձտյանցի 1870-ական թթ. վերջին Ջերմուկի հայ բնակչության տվյալին՝ 278 տուն, որն ըստ անձերի հաշվարկելիս կստանանք վերը նշված թիվը: Տե՛ս Սրվանձտյանց, Երկեր-2, էջ 417: Kévorkian, Paboudjian, նշվ. աշխ., էջ 408: Kévorkian, *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, p. 280.*

⁴⁹ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 36-37: Տիգրանակերտի (Դիարբեքիր) առաջնորդարանի 2-րդ տեղեկագրի թերհաշվառված տվյալներով Ջերմուկի հայ բնակչությունը 180 տուն էր: Տե՛ս «Գողգոթա հայ հոգևորականության եւ իր հօտին 1915 աղետալի տարին», էջ 383:

⁵⁰ Տե՛ս "Diary of Major E. Noel", էջ 12: Այլ տվյալով՝ 2000 հայ (տես "Diyarbakir Vilayetinde Ermeniler-/Armenians in Diyarbakir Province", İstanbul, 2011, էջ 13):

⁵¹ Տե՛ս Պարսամյան, նշվ. աշխ., էջ 37: Չմնտ. Սրվանձտյանց, Երկեր-2, էջ 417:

⁵² Ղ. Ինճիճյանի տվյալներով հայերն այդ եկեղեցիները 19-րդ դ. սկ. փոխնիփոխ էին օգտագործում («յորոց երբեմն զսին և երբեմն զսինս ի գործ ածեն»): Տե՛ս Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 239:

⁵³ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 18-19: Չմնտ. "Diyarbakir Travel Guide", էջ 130:

կիսաժայռափոր վանքը, որը սիրված ուխտատեղի էր հայերի համար⁵⁴: Չերմուկի արևելյան կողմում էր գտնվում **Շեկքար** կիսավեր ամրոցը՝ հայտնի որպես «Սեֆիլա բեկի» ապարանք (թրք.՝ konak)⁵⁵: Գյուղաքաղաքում 1870-ական թթ. վերջին պահպանվել էր ևս մի ավերակ եկեղեցի⁵⁶: Հատկանշական է, որ մահմեդական գլխավոր սրբավայրը՝ Ուլու ջամին երբեմնի **Սբ Կիրակոս** հայկական եկեղեցին էր⁵⁷: Չերմուկում կար նաև հայ ավետարանական (բողոքական) փոքրաթիվ համայնք, որն ուներ ժողովարան և դպրոց: 1870-ական թթ. վերջին ամերիկացի միսիոներներն այստեղ հիմնել էին «Արմենիա» քոլեջը: Վերջինս 1888 թ. տեղափոխվեց Խարբերդ՝ միանալով նշանավոր «Եփրատ» քոլեջին⁵⁸: Չերմուկ գյուղաքաղաքի այլազգի բնակչությունը կազմում էին «բողերը» (իմա՝ դմիկները-Գ. Բ.), թուրքերը և հրեաները⁵⁹: Չերմուկի շրջակայքը հարուստ էր ճարտարապետական հուշարձաններով: Առ այսօր պահպանվել են Չերմուկ գետի վրա կառուցված **Սինակի** (գյուղաքաղաքից 4-4.5 կմ հս, թրք.՝ Sinekli Köprüsü)⁶⁰ և **Հաբրմանի** (Չերմուկից շուրջ 7 կմ հվ-արմ՝ համանուն գյուղի մոտ) քարաշեն կամուրջները: Վերջինս կառուցել էին հայ վարպետները՝ 1775 թ.⁶¹: Հիշվում է նաև **Նշենիկի** կամուրջը (Չերմուկից շուրջ 7 կմ հվ, մանրամասներ չեն պահպանվել)⁶²: Հայտնի էին **Սբ Հովհաննես** (բրբռ.՝ Սբ Օվանես, հիշատակվում է Մինաս Համդեցու «Օրագրությունում»)՝⁶³ և Չերմուկի հյուսիս-արևելքում բարձրացող **Հեփալ** լեռան ստորոտին բխող **Սբ Խաչ** աղբյուրի մոտ գտնվող ուխտավայրերը⁶⁴: Բնության ուշագրավ հուշարձան է Չերմուկի արևմուտքում ձգվող **Հարսնադրներ** կամ **Հարսնեք** (թրք.՝ Gelincik) լեռնապարը, որի մասին 1870-ական թթ. վերջին Գ. Սրվանձոյանցը գրանցել է ժողովրդական մի ավանդազրույց⁶⁵: Գյուղաքաղաքի արմ մասում ընկած **Տրափշայի** սարահարթում տարածվում էին **Դրախտիկ** ընդհանուր անունով խաղողի և նուշի հարուստ այգիները⁶⁶:

Օսմանյան տիրապետության հաստատումով Չերմուկի գավառի բնակչության դեռ բյուզանդական ժամանակաշրջանից սկսված ազգային-դավանական նկարագրի խաթարումն ավելի մեծ ծավալներ ընդունեց, քանի որ քաղկեդոնականությանը հարած և «հույներ» կամ «հայ-հռոմներ» հորջորջվող հայերը ժամանակի ընթացքում զանգվածաբար մահմեդականացան՝ վերջնականապես կտրվելով ազգային արմատներից: Ինչպես Բալունում, այստեղ ևս քրիստոնեությանը հավատարիմ մնացած ազգակիցները նրանց կոչում էին «կեսկեսներ» կամ «կիսկիսներ» (տես ստորև)⁶⁷: Ընդ որում, այդ գործընթացը հաճախ ընթացել է բռնի ձևերով, երբ իսլամը պարտադրվել է զանգվածային կոտորածի սպառնալիքի

⁵⁴ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 19-20: Գ. Սրվանձոյանցը սրբավայրը կոչում է մատուռ: Տե՛ս Սրվանձոյանց, Երկեր-2, էջ 417:

⁵⁵ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 17-18:

⁵⁶ Տե՛ս Սրվանձոյանց, Երկեր-2, էջ 418:

⁵⁷ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 89:

⁵⁸ Նույն տեղում, էջ 36:

⁵⁹ Սրվանձոյանց, Երկեր-2, էջ 417:

⁶⁰ Սինակի կամրջից Չերմուկ ձգվում էր տեղացի հայերի կողմից Կապան կոչվող սալարկված անտիկ (ամենայն հավանականությամբ՝ հռոմեական ժամանակաշրջանի) ճանապարհը: Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 23:

⁶¹ Տե՛ս Արապեան, նշվ. աշխ., էջ 354: Հմմտ. "Diyarbakir Travel Guide", էջ 127:

⁶² Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 23:

⁶³ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 577:

⁶⁴ Սբ Խաչ ուխտավայրի մոտ երևում էին մի կառույցի ավերակներ (ամենայն հավանականությամբ՝ նախկին մենաստանի-Գ. Բ.): Չերմուկի խմելու ջուրը բերված էր այս վայրից՝ հատուկ կավե խողովակաշարով, որը ժողովուրդը կոչում էր Փողղանք: Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 28:

⁶⁵ Տե՛ս Սրվանձոյանց, Երկեր-2, էջ 417: Նշված լեռնապարի ժայռափոր քարանձավներում մեր օրերում հայտնաբերվել են հնաքարի դարաշրջանի որս պատկերող ժայռապատկերներ: Տե՛ս "Diyarbakir Travel Guide", էջ 127:

⁶⁶ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 26:

⁶⁷ Տե՛ս «ՎԷՆ», ԺԲ (ԺԸ) տարի, N° 2 (70), էջ 125-126:

ներքո⁶⁸: Չպետք է մոռանալ նաև, որ թուրքական իշխանությունները հետևողականորեն գավառի բնակավայրերում վերաբնակեցնում էին մահմեդական այլևայլ ցեղերի ներկայացուցիչների⁶⁹, որի հետևանքով հայ բնակչության եթնիկական տարածքն արդեն 19-րդ դ. խիստ կրճատվել էր և աղճատվել: Ի հետևանս այս ամենի Ձերմուկի գավառի տարբեր հատվածներում հանդիպում էին պատմական անվանումները պահած, բայց արդեն հայաթափված տասնյակ գյուղեր: 19-րդ դ. 70-ական թթ. վերջին Գ. Սրվաձտյանցն իր ուղևորությունների ընթացքում ուշագրավ նյութեր է հավաքել վերոհիշյալ տարածքի ավելի քան երկու տասնյակ դմիկաբնակ (զագայաբնակ) կամ քրդաբնակ գյուղերի մասին, ուր հանդիպել են երբեմնի հայ կյանքի առհավատյա «շեն կամ ավեր» եկեղեցիներ⁷⁰: Ավելի ուշ Գ. Սրվաձտյանցին զգալիորեն լրացրել են Մ. Փոստոլյանի, Գ. Գևորգյանի (Գեորգեան) և Ս. Պարսամյանի հաղորդումները: Հաշվի առնելով ինչպես վերոհիշյալ հեղինակների, այնպես էլ քննվող տարածքն արտացոլող տոպոգրաֆիկների տվյալները, մեզ հաջողվել է առանձնացնել նմանատիպ շուրջ 80 բնակավայր (տես «Հավելված»): Վերջիններս խմբավորել ենք ըստ հետևյալ գավառակների կամ շրջանների.

Ա. **Ձերմուկի գավառակ** (միջնադարում՝ **Հասարան** կամ **Հասառան**). Գրավում էր գավառի հարավարևմտյան մասը՝ Ձերմուկ գետի ավազանը, ինչպես նաև վերջինիս Շեյխան օժանդակի ստորին ձորահովիտը (Սինակ կամ Սինակաջուր): Որքան հնարավորություն է ընձեռում հասու քարտեզագրական նյութը⁷¹, նշված տարածքի բնակավայրերից ավելի քան 30-ը պահպանել էին հայեցի անվանումները (հիմնականում՝ աղճատված) կամ ժամանակին եղել են հայաբնակ:

Բ. **Չնքուշի (Շենքուշ) գավառակ**. Ընդգրկում էր գավառի արևմտյան հատվածը՝ Ձերմուկ գետի աջակողմյան Չնքուշ (ստորին հոսանքում՝ Շովառ) օժանդակի հովիտը, ինչպես նաև՝ Չնքուշ գյուղաքաղաքից հյուսիս-արևելք տարածվող Սպիտակքարի կամ Բոսմայի (Բոսման) լեռնային շրջանը: Այս տարածքում ճշտված է շուրջ 3 տասնյակ երբեմնի հայկական բնակավայր:

Գ. **Կեսկեսի գավառակ**. Ընդգրկում էր գավառի արևելքում գտնվող համանուն ավանի շրջակա երբեմնի հայաբնակ 9 բնակավայրերը:

Դ. **Ագրակ գետակի ձորահովիտ**. Ընդգրկում էր գավառի հյուսիսարևմտյան մասի բնակավայրերը (մեր հաշվարկով՝ 7), որոնք ձգվում էին Եփրատի ձախակողմյան նշված վտակի հովտում (թրք.՝ Ekreksuyu, ստորին հոսանքում՝ Erikliçay):

Այդ բնակավայրերի շարքում հարկ է առանձնացնել Ձերմուկ գյուղաքաղաքից 5 կմ հվ-արմ գտնվող **Հաբրման** կամ **Հավուռման** գյուղը, որը հայ գրչության կենտրոն էր⁷²: Գյուղում ընդօրինակված ձեռագրերից հայտնի են 1540 թ. Հաբրմանի **Սբ Սարգիս Չորավար** եկեղեցում Եղիա աբեղայի ձեռքով գրված Հայսմավուրքը, որը պահվում էր Սիրահայաց Սբ Աստվածածին վանքում (վերանորոգվել է Մինաս Համդեցու կողմից 1669 թ.՝ «արդեամբ եւ տրովք Հապռմանցի Գասպար ծերունւոյ քրիստոնէի») և 1561 թ. Ավետարանը, որը 18-րդ

⁶⁸ Տե՛ս մասնավորապես Պարսամեան, նշվ. աշխ., էջ 22,89:

⁶⁹ Այս տեսանկյունից հատկանշական է Չնքուշի Սիրահայաց Սբ Աստվածածին վանքի անմիջական հարևանությամբ 17-րդ դ. թուրք շեյխերի Թաքիա (թրք.՝ Tekke) գյուղի հիմնումը, որը, Գ. Գևորգյանի պատկերավոր խոսքերով, վերածվեց «փուշի մը պես վանքին կողը խրուած» հենակետի: Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 33:

⁷⁰ Նույն տեղում, էջ 418:

⁷¹ Վստահաբար կարելի է պնդել, որ գավառի երբեմնի հայկական բնակավայրերը, ինչպես նաև հայեցի տեղանունները, իրականում, ավելի շատ էին և պահպանվել են նաև մեր օրերում: Սակայն այդ մասին լրացուցիչ տեղեկություններ չկան:

⁷² Չպետք է շփոթել Եփրատի աջափնյակում գտնվող համանուն բնակավայրի հետ: Ի դեպ, վերջինիս և շրջակա գյուղերի (Սանկաթո, Պեմդո կամ Բըմրդո ևն) բնակչությունը երբեմնի հայեր էին, որոնք բռնի մահմեդականացվելով՝ «քրդացել» էին: Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 21, 453:

դ. գյուղի հայերն իրենց հետ տեղափոխել էին Ջերմուկ (ձեռագիրը կոչվում էր «**Հավուռ-մանա Աւետարան**»)⁷³:

20-րդ դ. սկ. գավառակենտրոնից բացի հայ բնակչությունը կենտրոնացած էր Ջերմուկի գավառի հետևյալ 3 բնակավայրերում:

1. **Չնքուշ** (միջնադարում՝ Շենքուշ կամ Շնքուշ) **գյուղաքաղաք**։ Գտնվում էր Եփրատի ձախ ափին բարձրացող Ծովառ (Չովառ, օտար հորջորջմամբ՝ Zogar, նաև՝ Zorgadağ) լեռնազանգվածի հյուսիսարևելյան ստորոտին: Տեղի հայերի շրջանում լայնորեն տարածված ավանդազրույցների համաձայն բնակավայրը հիմնել էին 11-րդ դ. 2-րդ կեսին սելջուկյան արհավիրքներից խույս տված անեցիները⁷⁴: Հետագայում այլևայլ վայրերից հայերի ներհոսքը շարունակվեց, սակայն հատկապես 16-րդ դ. վերջին այն հասավ գագաթնակետին, երբ Բալուխից և հարակից տարբեր գյուղերից ու ավաններից այստեղ հայտնվեցին նորանոր ընտանիքներ: Ընդ որում, բալուեցի հայերը նախապես բնակություն էին հաստատել գյուղաքաղաքից շուրջ 10 կմ հս-արլ գտնվող **Շեն** (Նորշեն) գյուղում: Ամենայն հավանականությամբ 16-րդ դ. 60-70-ական թթ., հարևան քուրդ ավազակաբարո ավատատերերի ոտնձգություններից պաշտպանվելու նպատակով, նորեկները Փիլո Քեհյայի գլխավորությամբ տեղափոխվեցին և հաստատվեցին Ծովառի դժվարամատույց շրջանում՝ որի հետևանքով հինավուրց բերդի շրջակայքում հիմնված բնակավայրը վերածվեց բազմամարդ գյուղաքաղաքի⁷⁵: Նախկին գյուղանվան նմանությամբ վերջինս վերանվանվեց **Շենքուշ** (Շնքուշ), որն էլ հետագայում մի փոքր ձևափոխվելով, սկսեց հնչել **Չնքուշ**⁷⁶: 16-րդ դ. վերջին Չնքուշը համանուն սանջակի (իվա) կենտրոնն էր, որը 17-րդ դարից միացվեց Ջերմուկի (Չերմիք) օջաքըքին⁷⁷: Կարծում ենք այս հանգամանքով պետք է բացատրել երկարատև զինված հակամարտությունը, որը ծագեց տեղի հայ բնակչության և Ջերմուկի իշխանության միջև: Վերջինիս բեյերը մշտապես փորձել են իրենց գիրիշխանությանը ենթարկել այս հայտնի արհեստագործական կենտրոնը: Բացի այդ, մինչև 19-րդ դ. 40-ական թթ. Չնքուշն իր շրջակայքով առանձնահատուկ կառավարում ուներ: Մեզ հասու տվյալներով գյուղաքաղաքի հայերն օգտվում էին զգալի ինքնուրույնությունից՝ կառավարվելով ժառանգական քեհյաների («քեհյա»-«քաղաքապետ», նաև՝ «գեղջավագ») կողմից, որոնց նախնին ավանդության համաձայն վերոհիշյալ Փիլոն էր: Ընդ որում, ինչպես նշում է Միխաս Համդեցին, 17-րդ դ. Շենքուշ-Չնքուշի հայ կառավարիչը կոչվել է **վոյվոդ** («վոյվոտ»): Ի դեպ, վերջին փաստից կարելի է եզրակացնել, որ հայ քեհյաներն ունեցել են նաև որոշակի ռազմական իրավասություններ⁷⁸: 18-րդ դ. հայկական քեհյայությանը (վոյվոդություն) զուգահեռ Չնքուշում հաստատվեց նաև ինքնուրույն մահմեդական բեյություն: Վերջինիս հիմնադիրը տեղի

⁷³ Հայսմավուրքի հիշատակարանում նշվում է. «Գրեցաւ գիրքս ... ի քաղաքս Ջերմուկ, ի յաստուածապահ գիւղն ի Հապլ(ը)ռման, ի դուռըն Ս. Սարգսի վարավարին եւ որդւոյ նորին Սարտիրոսին, եւ Ս. Նիկողայոսի հայրապետին»: Տե՛ս «Թորոս աղբար», էջ 456-457: Հմմտ. Պարսամեան, նշվ. աշխ., էջ 21, 36-37: Գեորգեան, նշվ. աշխ., էջ 22: Գ. Սրվանձտյանցի տվյալներով 1870-ական թթ. վերջին նշված եկեղեցին կիսավեր վիճակում դեռ պահպանվել էր: Տե՛ս Սրվանձտյանց, Երկեր-2, էջ 417: Ի դեպ, չի բացառվում, որ հիշատակվող Սբ Նիկողայոսը եղել է գյուղի մյուս եկեղեցին (Գ. Բ.):

⁷⁴ Ավելի մանրամասն տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 29-30:

⁷⁵ Որպես քաղաքային բնակավայր Չնքուշը ձեռագրական հիշատակարաններում սկսում է հաճախակի հանդիպել 1580-ական թվականներից: Տե՛ս Սարգսյան Ա., Չնքուշի ձեռագրական ժառանգությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2016, № 1, էջ 310-315: Ի դեպ, Ս. Փուսուկյանի խիստ մոտավոր, ոչ ճիշտ հաշվարկներով այս իրադարձությունը տեղի է ունեցել 250 տարի առաջ, այն է՝ 17-րդ դ. 2-րդ կեսին: Տե՛ս Փուսուկեան, նշվ. աշխ., էջ 8: Հետևելով Ղ. Ալիշանին, Գ. Գևորգյանը Չնքուշի բերդը նույնացրել է Ծոփքի հնագույն բնաբերդ ամրոցին: Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 11, 27-28: Հմմտ. Գ. Գեորգեան, Հայ Չնքուշը: ԺԸ-Ի դար, «Բազմավեպ», Վենետիկ-Ս Ղապար, 1964, № 7-9, էջ 218-219:

⁷⁶ Տե՛ս Փուսուկեան, նշվ. աշխ., էջ 11-12: Շենքուշ տեղանունը ստուգաբանվում է «շեն օջախ» (տես Գեորգեան, նշվ. աշխ., էջ 29, 392): Այս առումով հատկանշական է 17-րդ դ. մի հիշատակարանում հանդիպող հետևյալ ստուգաբանությունը. «... ի տիրախնամ գիւղաքաղաքն Շենքուշ, որ ստուգաբանի Շեն քօշայ (իմա՝ շեն անկյուն» - Գ. Բ.) որ և այսպես է»: Տե՛ս Սարգսյան, նշվ. աշխ., էջ 316:

⁷⁷ Տե՛ս Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 239: Մինչև Մեծ եղեռն Չնքուշը Ջերմուկի գավառի գյուղախմբի կենտրոնն էր:

⁷⁸ Տե՛ս ծանոթություն 38:

Եկեղեցու ժամկոչի կրոնափոխ որդին էր, որը ռազմական ծառայության անցնելով օսման-յան բանակում, ցուցաբերած քաջագործությունների համար թուրքերից ստացել էր **Գաբուլգրան** պատվանունը (թրք.՝ Kapikiran - «դուռ կոտրող», «դուռ խորտակող»)՝⁷⁹: Մ. Փուսուլյանը Չնքուշում Գափուգրանի հայտնվելն այլ կերպ է ներկայացնում: Ըստ հեղինակի, վերջինս Վանի «**Շիրվան գիւղէն**» էր (իմա՝ Վանա լճից հվ ընկած Շիրվան կամ Շերվանք գավառից, որը 16 դ.-19-րդ դ. 50-ականթթ. եղել է Վանի էյալետի կազմում- Գ. Բ.) և նախապես հաստատվել էր Չերմուկի շրջանի Շիւլար (Շեյխան) բնակավայրում: Լուրջ հակասություններ ունենալով Չերմուկի կառավարչի հետ, Գափուգրանը **հայերի համաձայնությամբ** (ընդգծումը մերն է- Գ. Բ.) տեղափոխվեց Չնքուշ՝ դառնալով գյուղաքաղաքի փաստացի կառավարիչը կամ «**Չնգզցոց պետը**»⁸⁰: Ի պատիվ Գափուգրանի, այն թաղամասը, որը կազմում էր գուղաքաղաքի Սըրմենց թաղի մի հատվածը, կոչվում էր «**Սարային թաղ**», որը մեր կարծիքով նույն «**Սարայի փողոցն**» է, ուր նախապես կառուցվել էին Նաև Փիլո քեհյայի հետևորդների տները⁸¹: Փաստորեն, ի հակակշիռ Չերմուկի օջաքլքի, Չնքուշում ձևավորվեց առանձին ինքնավար միավոր, որի գերագահ կառավարիչը թեև հայկական ծագումով մահմեդական էր, բայց հայ քեհյաները մինչև 19-րդ դ. 1-ին կեսը շարունակում էին պահել գերակա իրավունքները: Դրա օգտին են խոսում մի շարք փաստեր.

1. Մահմեդական իշխանությունը ներկայացնող Գաբուլգրանը Չնքուշ էր տեղափոխվել հայերի **թույլտվությամբ և աջակցությամբ** (այս և հետագա ընդգծումները մերն են - Գ. Բ.)⁸²:

2. 17-րդ դ. 2-րդ կեսին Չնքուշում հաստատված մահմեդական բնակչության մեծագույն մասը նույնպես նախօրոք ստացել էր Փիլո քեհյայի որդի Փիլո խաչոյի **թույլտվությունը**:

3. Գաբուլգրանն իր նստավայր-ապարանքը կառուցել էր **հայաբնակ Սըրմենց թաղում**: Նրա ժառանգներն այստեղ շարունակում էին բնակվել նաև 20-րդ դ. սկ.⁸³: Ըստ եղբայրների, Չնքուշի հայկական ծագում ունեցող մահմեդական բեյը **Նախընտրել էր բնակվել հարազատ և գերիշխող էթնիկական միջավայրում**⁸⁴:

4. Հատկանշական է, որ Գաբուլգրանին **հաջորդել են դարձյալ հայկական ծագում ունեցող կրոնափոխ Շահին աղայենք** (Շահինյաններ), որոնց ապարանքի ավերակները («Շահին աղայենց տներ») պահպանվել էին իրենց հիմնած **Սալվազ** գյուղում՝ Չնքուշից շուրջ 6 կմ հս-արլ⁸⁵:

18-րդ դ. 2-րդ կեսին - 19-րդ դ. առաջին տասնամյակներին Չնքուշի հայերը երկարատև բախումներ են ունեցել նաև Եփրատի աջափնյակում գտնվող **Էոթեկեչե** (Էոթեկեչե-Բիբոյ)⁸⁶ գավառակի մահմեդականների հետ: Մեր կարծիքով դրանք նախևառաջ հրահրվել էին թուրքական իշխանությունների կողմից, որոնք ամեն կերպ փորձում էին շրջափակման մեջ վերցնել և մեկուսացնել այս ինքնավար հայկական շրջանը: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Էոթեկեչեի, ինչպես նաև սահմանակից Կարկառի (Կերկեր) գավառակներում թուրքերը պարբերաբար վերաբնակեցրել էին չերքեզների՝

⁷⁹ Տե՛ս Ինճիճեան, Նշվ. աշխ., էջ 240: Գեորգեան, էջ 38-39, 445-448: Ավելի ուշ մասնակցելով ռուս-թուրքական 1768-1774 թթ. պատերազմին, Գաբուլգրանը նույնիսկ արժանացավ Բյուրախիայի փաշայի տիտղոսին: Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 38-39:

⁸⁰ Ղ. Ինճիճեանի բնութագրմամբ՝ Չնքուշը կառավարվում էր հասուն բեյի («պեյ մասնաւոր») կողմից: Տե՛ս Ինճիճեան, Նշվ. աշխ., էջ 239:

⁸¹ Տե՛ս Փուսուլեան, Նշվ. աշխ., էջ 12-13:

⁸² Նույն տեղում, էջ 14:

⁸³ Տե՛ս Փուսուլեան, Նշվ. աշխ., էջ 12-13: Հմմտ. Գեորգեան, էջ 38, 445-448:

⁸⁴ Ուշագրավ է, որ անգամ Գաբուլգրանի ծոռը՝ Հյուսեյին բեյը (20-րդ դ. սկ.), բացեփակաբար ընդունում էր իր հայկական ծագումը, և ինչպես Գ. Գևորգյանն է նշում՝ «կը սիրէր Հայերն ու բարեկամական յարաբերութիւն կը պահէր անոնց հետ»: Այդ պատճառով Չնքուշի նորեկ թուրք բեյերը նրան ծաղրաբար անվանում էին «անտոթի պեյ», ավելին՝ աշխատում էին նրա հետ ընդհանրապես առնչություն չունենալ: Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 38:

⁸⁵ Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 39:

⁸⁶ Էոթեկեչեի մասին տե՛ս Փուսուլեան, Նշվ. աշխ., էջ 20: Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 38:

Նրանց վերապահելով մեծ արտոնություններ և լիազորություններ: Ի հետևանս նման քաղաքականության տեղի հայ բնակչության մի խոշոր հատված, չտանելով նորեկների բռնությունները, աստիճանաբար մահմեդականություն ընդունեց և ժամանակի ընթացքում ձուլվեց («բրդացավ»)⁸⁷: Պակաս կարևոր չէին նաև տնտեսական շաժառոթները: Եփրատի աջափնյա շրջանները համատարած ծածկված էին գլխորի (կաղնու տեսակ) անտառակներով, որոնցից հավաքված պտուղներից ստացվող ներկանյութը մեծ նշանակություն ուներ խաղախորդության (դաբաղություն) նշանավոր կենտրոն Չնքուշ գյուղաքաղաքի արհեստավորների համար: Ընդհանուր անունով «**Ջատանոյի անտառ**» կոչվող այս շրջանն իրենց վերահսկողության տակ վերցնելով՝ տեղի մահմեդական կառավարիչները նպատակ էին հետապնդում հայերին զրկել տնտեսական կարևորություն ունեցող տարածքից օգտվելու հնարավորությունից և լիակատար կախվածության մեջ գցել նրանց⁸⁸: Մեզ հասու տվյալները ցույց են տալիս, որ նրանց դեմ ռազմական պայքարում չնքուշի հայերն առանձնակի հաջողություններ են ունեցել քեիյաներ **Փիլո խաչոյի** և նրա որդի **Խաչեր** մահտեսի **Յողսուլյանի** (Յողսուլ խաչո) կառավարման տարիներին: Վերջիններիս հմուտ հրամանատարությամբ հայերը մի քան անգամ ջախջախեցին Էոթեկեչեի մանսուրանցի և բեմըրդոցի («պերմաղցի») ավագակաբարո ցեղերին⁸⁹: Հատկապես կցանկանայինք առանձնացնել **Յողսուլ խաչոյին**, որի հեղինակությունն ընդունում էին ոչ միայն անդրեփրատյան գավառակների բնակչությունը, այլև Չնքուշից հյուսիս-արևելք ընկած **Սպիտակ քարի** կամ **Բոսմայի** գյուղախմբի «քուրդ» հորջորջվող մահմեդականները, որոնք տեղի հայերի հետ պահպանում էին բարիդրացիական հարաբերություններ (ի դեպ, նրանց մի զգալի մասը նույնպես ուներ հայկական արմատներ-Գ. Բ.)⁹⁰: Չմոռանալ նաև, որ կան փաստեր, որ հայ քեիյաներ են եղել Չնքուշի շրջակա ավաններում: Այսպես, Փիլո խաչոյից հետո Չնքուշի քեիյա է դարձել գյուղաքաղաքից 8-10 կմ արլ գտնվող **Ծովդերե** (թրք.՝ Cevdereköy) ավանի Պաղտո քեիյայի որդին՝ խաչո քեիյան⁹¹: Ցավոք, Չնքուշի հայկական քեիյայությունը, Արևմտյան Հայաստանի մյուս կիսանկախ կամ ինքնավար գավառների և համայնքների նման վերացվեցին 1840-ական թթ. վերջին օսմանյան պետության կողմից⁹²: Չնքուշում պահպանվել էին պատմական մի շարք ուշագրավ հուշարձաններ և հնավայրեր: Գյուղաքաղաքի հվ-արևելյան մասում Չնքուշ կամ «Շուկային չայ»⁹³ կոչվող գետակի բարձրադիր ափին էր գտնվում հինավուրց ավերակ բերդը (ժողովրդական միջավայրում՝ «Գալա» կամ «Գալայը», թրք.՝ Tekkale): Ընդ որում, առ այսօր պահպանվել են նաև բերդի ջրամբարները: Ուշագրավ է, որ քաղաքի թուրքերը Չնքուշի բերդը համարում էին «անհավատներից (ըստ Գևորգյանի՝ հայերից) մնացած» (թրք.՝ gâvurdan kalma)⁹⁴: Չնքուշի շուկայի արևելյան մասում («վարի շուկա») գտնվում էին կղմինդրե «**Փլուկ** (Փլիկ)

⁸⁷ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 38, 453: Գավառակի գյուղերից էին Հաբրմանը, Սանկաթոն, Բիբուրը (Պիպուլ), Բեմրոն (Պեմրո կամ Պերմաղ) ևն: Հանդիպում էին նաև հայասնուն բնակավայրեր (օր. Էվերեկ-Ավերակ): Անգամ 20-րդ դ. սկ. նշված վարչամիավորների կրոնափոխ բնակիչները պահպանել էին հայկական բավմաթիվ սովորություններ (Չատկին ձու էին ներկում, հաց թխելիս խմորը խաչակնքում էին, Տյանընդառաջին (Մելետ) խարոյկ էին վառում ևն): Չի բացառվում, որ այստեղ ևս մահմեդականացել էին գերապանցապես քաղկեդոնական հայերը («հայ-հոռոմներ»):

⁸⁸ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 366, 389: Ի դեպ, գլխորի անտառներով հնագույն ժամանակներից աչքի է ընկել նաև Աղձնիքը, ինչը գրանցված է «Աշխարհացոյց»-ում: Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, *Անանիա Շիրակացու մատենագրությունը*, Ե., 1944, էջ 349:

⁸⁹ Տե՛ս Փուսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 17-20:

⁹⁰ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 449-452: Գ. Գևորգյանի կարծիքով Յողսուլ խաչոն ծնվել է «1800-ի մօտերը» (նույն տեղում, էջ 41): Մինչդեռ Փուսուլյանի տվյալներով նա ծնվել է 1770-1780-ական թթ. (հեղինակի սպրած ժամանակից «140Էն 150 տարի առաջ»): Տե՛ս Փուսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 20:

⁹¹ Տե՛ս Փուսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 19: 20-րդ դ. սկ. այլապաբնակ էր:

⁹² Ըստ Գ. Գևորգյանի՝ Չնքուշի ինքնուրույն բեյությունը և հայկական քեիյայությունը վերացվել են 1847 թ., երբ այստեղ հաստատվեց օսմանյան կառավարոյից: Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 42:

⁹³ Տե՛ս Փուսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 12:

⁹⁴ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 11-12: Հմմտ. “Diarbakir. Travel Guide”, էջ 140:

խան» շինության ավերակները⁹⁵, իսկ շուկային կից՝ «հոյաշեն» բաղնիքը: Թուրքերը նշված 2 կառույցները ևս համարում էին «անհավատներից մնացած»⁹⁶: Բյուզանդական ժամանակաշրջանի շինությունն է համարվում առ այսօր կանգուն 17մ բարձրությամբ (30 ոտք) և 5 մ լայնությամբ քարե կամուրջը՝ կառուցված Չնքուշ գետակի վրա⁹⁷:

Չնքուշի հնագույն Մայր եկեղեցին կոչվում էր **Սբ Կարապետ** (տեղացիների կողմից կոչվում էր ուղղակի «**ժամ**»): 1906 թ. ավարտվեց նաև հայ կաթողիկե համայնքի **Սբ Լուսավորիչ** եկեղեցու կառուցումը⁹⁸: 1880-ական թվականներից գործում էր նաև հայ ավետարանական եկեղեցի: Ուշագրավ է, որ Չնքուշի 3 համայնքների սրբավայրերը գտնվում էին գյուղաքաղաքի կենտրոնական **ժամուն թաղում**⁹⁹: Հատկանշական է, որ գյուղաքաղաքի մահմեդական գլխավոր սրբավայրը՝ Բերդի թաղում գտնվող Ուլու ջամին (ամրոցին կից) երբեմնի եկեղեցի էր¹⁰⁰: Թեև վերջինիս պատերին պահպանվել էին հունարեն արձանագրություններ, սակայն սկզբնաղբյուրներում հույն բնակչության գոյության որևէ փաստի բացակայությունը ենթադրել է տալիս, որ բերդի եկեղեցին իրականում եղել է քաղկեդոնական հայերի սրբավայր (հետևանք բուզանդական տիրապետության): Ավելի ուշ՝ օսմանյան տիրապետության հաստատումով, թուրքերն այն բռնազավթել և վերածել էին մզկիթի¹⁰¹:

Չնքուշում 1880-1890-ական թթ. գործել է առաքելական **Մեսրոպյան** դպրոցը: Համիդյան կոտորածների հետևանքով կրթական գործը ճգնաժամ ապրեց, իսկ 1899-1901 թթ.՝ դպրոցն անգամ փակվեց¹⁰²: Սակայն 1902-ին Կ. Պոլսի պատրիարքարանի, մասամբ՝ նաև ԱՄՆ-ում հաստատված չնքուշցիների աջակցությամբ դպրոցը վերաբացվեց՝ **Սահակյան վարժարան** անունով, ուր 1910-ականներին գործում էր նաև աղջիկների բաժին¹⁰³: Դպրոց ունեին նաև կաթոլիկները, որոնք 1912 թ. բացեցին նաև աղջիկների կրթարան: Դպրոցներ է ունեցել (տղաների և աղջիկների) նաև հայ ավետարանական համայնքը: Ընդ որում, 1909-1912 թթ. ավետարանականների դպրոցները միավորվել էին Սահակյան վարժարանին¹⁰⁴:

Չնքուշի հետ սերտորեն կապված է մեր կողմից արդեն հիշատակված **Ծովառ** լեռնազանգվածը: Վերջինս ոչ միայն պաշտպանական բացառիկ դեր է խաղացել, քանի որ արևմուտքից ու հարավից հուսալիորեն պաշտպանում էր գյուղաքաղաքը, այլև ուներ տնտեսական կարևոր նշանակություն և սիրելի զբոսավայր էր տեղի հայության համար: Ծովառի այլևայլ մասերում հանդիպում էին նաև հնագիտական ուշագրավ հնավայրեր¹⁰⁵:

Ա. «**Քարե կարաս**». Ավելի քան 2.5 մ խորությամբ փոս էր, որը հավանաբար եղել է նախամարդու կացարան¹⁰⁶:

⁹⁵ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 13: Հմմտ. Փոխուլեան, նշվ. աշխ., էջ 10:

⁹⁶ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 14:

⁹⁷ Նույն տեղում: Հմմտ. "Diarbakir Travel Guide", էջ 143: Կամրջին հարող վայրը հայտնի էր *Չպրլլոց անունով*, ուր նախապես գտնվում էր գյուղաքաղաքի աղբավայրը (այստեղ էին հավաքվում ավերորդ իրերն ու թափոնները, հմմտ. խսկց. «Կիրիլանոց»): Ավելի ուշ այն վերածվեց Չնքուշի հայտնի շուկայի «առեւտրական հրապարակի»: Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 346, 394:

⁹⁸ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 177:

⁹⁹ Նույն տեղում, էջ 17:

¹⁰⁰ Ղ. Ինճիճյանի խոսքերով՝ «կայր ի յաւանս և այլ եկեղեցի, որ էակց ի ձեռս տաճկաց»: Տե՛ս Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 240: Հմմտ. "Diarbakir. Travel Guide", էջ 144:

¹⁰¹ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 24:

¹⁰² Նույն տեղում, էջ 211-212:

¹⁰³ Նույն տեղում, էջ 214:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 213-214:

¹⁰⁵ Ծովառի մասին ավելի մանրամասն տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 16-18:

¹⁰⁶ Գ. Գևորգյանի խոսքերով՝ «մէկուկէ մարդահասակ խորութեամբ կարասանման կլոր փոս մը ... Նախապատմական դարերուն հաւանաբար այն ծառայած էր նախամարդուն որպէս ապաստան վայրի գապաններուն դէմ»: Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 16:

Բ. «**Փիսիկ մերդիվանի**» (բառացի՝ «կատուների սանդուղք»)։ Բրոնզիդարյան արիեստական աստիճաններ էին, որոնք հանդիպում են նաև Հայաստանի այլ մասերում (այդ թվում՝ ՀՀ-ում)՝ հանդիսանալով գոհարանների կամ տաճարների հնագույն նախատիպեր։

Գ. «**Ճծվըներու մուղարա**» (< թրբ.՝ mağara- «բարայր», «անձավ»)։ Սիրված ուխտավայր էր չնթուլցի կանանց համար, միաժամանակ՝ ամռան շոգերից պատսպարվելու վայր¹⁰⁷։

Դ. **Վանքուկ**։ Ժողովրդական ավանդության համաձայն, Չնթուլի մոտակա Սիրահայաց Սբ Աստվածածին վանքը սկզբնապես նախատեսված է եղել հիմնել այստեղ։ Կարծում ենք, սակայն, որ այն եղել է հնագույն այլ սրբավայր, որը հետագայում շփոթվել է Սբ Աստվածածին վանքի հետ։

Ե. «**Թունդիք մուղարա**» կամ «**Հավլու տեղը**» (թրբ.՝ «հագուստների վայր»)։ Նույնպես սիրված ուխտավայր էր, ընդ որում քարանձավը ներսից ամբողջությամբ սալարկված էր։ Սբ Հարության տոնին (Չատիկ) այստեղ ուխտի էին գալիս չնթուլցի կանայք ու աղջիկները՝ զուգված իրենց լավագույն հագուստներով, և մի քանի օր շարունակ տոնախմբություններ կազմակերպում։

Չ. «**Գյունեյի** (արևմտահայ տառադարձությամբ՝ «Կիւնեյի») **մուղարա**»։ 19 դ. վերջին-20 դ. սկզբին քարանձավում հայտնաբերվել էին տարբեր զինատեսակների (նետեր, նիզակներ) և սաղավարտների մնացորդներ¹⁰⁸։ Ուշագրավ է, որ 1908 թ. հաջորդած տարիներին չնթուլցի հայ երիտասարդներն ամռան ամիսներին «Գյունեյի մուղարայի» մոտ կազմակերպում էին հրաձգության վարժանքներ¹⁰⁹։ Ավելացնենք նաև, որ Չնթուլի հարավարևելքում բարձրացող **Աբդելմսեհ** (Աբսլմսեհ) լեռնագագաթի վրա գտնվում էր համանուն սրբի ուխտավայրը¹¹⁰։

Չնթուլը Դիարբեքիի վիլայեթի բազմամարդ բնակավայրերից էր, ընդ որում՝ հայերի գերակշիռ մեծամասնությամբ։ Սակայն ճշգրիտ վիճակագրության բացակայությունն ուսումնասիրողներին կրկին կանգնեցրել է որոշակի դժվարությունների առաջ։ Այսպես, Գ. Գևորգյանի մոտավոր հաշվարկներով Չնթուլի բնակչությունը Մեծ եղեռնի նախօրեին կազմել է 10000 հայ (1200-1500 տուն) և 2400 «թուրք» (300 տուն)¹¹¹։ Սակայն նույն հեղինակի մեկ այլ տվյալի համաձայն ցեղասպանության նախօրեին գյուղաքաղաքն ուներ մոտ 15 000 բնակչություն¹¹²։ Եթե բացառենք մահմեդականներին, ապա հայերի թիվն իրականում ավելին է եղել՝ շուրջ 12600 մարդ։ Կարծում ենք վերջինս ավելի մոտ է իրականությանը, մանավանդ հարկ է նկատի ունենալ, որ 1895-ից հետո Չնթուլում էր հաստատվել հարևան ավերված Ադիշ ավանի հայ բնակչության մեծամասնությունը՝ մեր հաշվարկներով

¹⁰⁷ Տե՛ս Գեորգեան, *Նույն տեղում*։ Փոսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 28։

¹⁰⁸ Նման գտածոներ էին հայտնաբերվել նաև բերդի տարածքում, ինչպես նաև Չնթուլի գետակից հարավ գտնվող Խանդակի քարայրներում։ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 24։

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 18, 24։

¹¹⁰ Տե՛ս Սրվանձտյանց, *Երկեր-2*, էջ 421։

¹¹¹ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 84։ Հեղինակի հաշվարկները կատարված են «Բիւկանդիոն» օրաթերթի 1898 և 1909 թթ. հաղորդումների հիման վրա։ Ըստ այդմ, գյուղաքաղաքի բնակչությունը կազմել են հայեր՝ 1200-1500 տուն, մահմեդականներ (թուրք ու քիւրտ)՝ 300 տուն։ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 38, էջ 83-84։ Հմտ. էջ 387։ Ըստ Մ. Փոսուլյանի Չնթուլը 1915 թ. ուներ 8000 բն. (1500 տուն), որից 1300-ը (300 տուն)՝ թուրք։ Փաստորեն, հեղինակի էսպես նվազեցված տվյալներով միայն հայերի թիվը եղել է 6700 մարդ։ Տե՛ս Փոսուլեան, *Նշվ. աշխ.*, էջ 28։ Դիարբեքիի (Տիգրանակերտ) առաջնորդարանի 1-ին տեղակազրի համաձայն Չնթուլում բնակվում էր 10200 հայ (տես Kévorkian, Paboudjian, *Նշվ. աշխ.*, էջ 408։ Հմտ. Kévorkian, *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir*, էջ 280-281)։ Առաջնորդարանի 2-րդ տեղեկագրում հայ բնակչության թիվը բացահայտ թերհաշվառված է և աղավաղված՝ ընդամենը 600 տուն հայ։ Տե՛ս «Գորգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 391-392։

¹¹² Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 6։

շուրջ 2500 մարդ¹¹³: Այս տեսակետը հաստատվում է նաև Է. Նոյեյի վիճակագրությամբ: Վերջինիս համաձայն Չերմուկի գավառի 2 «գյուղերը» (իմա՝ Չնքուշ գյուղաքաղաքը և Ադիշ ավանը- Գ. Բ.) միասին ունեին շուրջ 16000 բնակիչ (2 000 տուն 15 000 լուսավորչական և 120 տուն հայ կաթոլիկ կամ \approx 860-900 մարդ, վերջին հաշվարկը մերն է- Գ. Բ.)¹¹⁴: Եթե կրկին առանձնացնենք Չնքուշում հաստատված ադիշցիների վերոնշյալ թիվը, ապա բուն գյուղաքաղաքում կունենանք 13500 հայ բնակիչ: Փաստորեն, Մեծ եղեռնի նախօրյակին Չնքուշի հայ բնակչությունը կազմում էր միջինը 13000 մարդ:

Գ. Գևորգյանի տեղեկությունները հնարավորություն են ընձեռում ճշտելու Չնքուշի հայկական թաղերը¹¹⁵. 1. **Բաշփիարի** (Վերին աղբյուրի) **մահիլա** կամ թաղ, 2. **Բերդի թաղ** կամ **Կալա մահիլա** (արևմտահայ տառադարձությամբ՝ «Գալա Մահիլե», թրք.՝ Kalemahalle)¹¹⁶, 3. **Գասապենց մահիլա** (մսագործների թաղը)¹¹⁷, 4. **ժամուն թաղ**, 5. **Շուկի մահիլա**, 6. **Չխուր մահիլա**, 7. **Պճո-Մուրադենց**, 8. **Սանդոյենց**, 9. **Սրըմենց**, 10. **Քահյա Խաչոյենց**: Հայաբնակ թաղամասերը գերազանցապես զբաղեցնում էին Չնքուշի կենտրոնական հատվածները¹¹⁸:

Մահմեդականները, որոնք աղբյուրներում կոչվում են «թուրքեր»¹¹⁹, բնակվում էին գյուղաքաղաքի հյուսիսում գտնվող առանձին թաղամասում, որը հայաբնակ թաղերից սահմանազատված էր շուկայի տարածքով և Չնքուշ գետակի ձորակներից մեկով¹²⁰: Մահմեդականների ընտանիքներ էին հանդիպում նաև **Բերդի թաղում**: Ուշագրավ է, որ նրանց մի մասը 19-րդ դ. կրոնափոխ եղած հայեր էին¹²¹:

Ինչպես նշել ենք, Չնքուշն Արևմտյան Հայաստանի արհեստագործության երևելի կենտրոն էր: Ընդ որում, տեղի բնակիչների գերակշիռ մեծամասնությունը (Գ. Գևորգյանի տվյալների վրա հիմնված հաշվարկներով՝ շուրջ 80 %-ը-Գ. Բ.) զբաղվում էր **խաղախորդության** կամ **դաբաղության**: Հեղինակի կարծիքով, այս արհեստը Չնքուշ էին բերել դեռ անեցի կաշեգործները 11-րդ դ.¹²²: Չնքուշում պատրաստված կաշեգործական արտադրանքն արտահանվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակավայրեր, այլև ասիական տարբեր երկրներ, ընդհուպ՝ Հնդկաստան, Բիրմա (Մյանմա), Չինաստան, անգամ՝ Մոնղոլիա¹²³: Ընդ որում, Գ. Գևորգյանի կարծիքով խաղախորդության զարգացման գործում կարևոր դեր ունեին Չնքուշի շրջակա գոթորի և աղթորի¹²⁴ (թրք.՝ «աղտորտերե», թրք.՝ sumak կամ somak) հարուստ անտառները¹²⁵: Կարևոր դեր ունեին նաև Ծովառի ստորոտին առատորեն աճող նռնենիները (Չնքուշի 3 գլխավոր խաղախորդարաններում կաշին ներկելու նպատակով օգտագործել են նաև նռան կեղև)¹²⁶: Այս տեսանկյունից հատկանշական է հայերենի «չնքուշ» բառը, որ նշանակում էր կոշիկ պատրաստելու

¹¹³ Մինչև 1895 թ. Ադիշն ուներ շուրջ 400 տուն կամ 3000 բն.: Ի դեպ, Ադիշը 20-րդ դ. առաջին տարիներին մասամբ վերաբնակեցվել էր, թեև որոշակի թիվ էին կապում նաև գյուղից այլևայլ բնակավայրեր հեռացածները. մանրամասն տե՛ս իր տեղում:

¹¹⁴ "Diary of Major E. Noel", էջ 12-13:

¹¹⁵ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 9:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 4, 12:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 398:

¹¹⁸ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 4 (ըստ «Չնքուշի համայնապատկերը 1913-ին» լուսանկարի ծանոթագրության):

¹¹⁹ Ըստ Մ. Փոստոյանի՝ «բիրտեր և թուրքեր»: Տե՛ս Փոստոյան, նշվ. աշխ., էջ 14: Մեր կարծիքով Չնքուշի «թուրք» հորջորջվող մահմեդականներն իրականում թրքացած դվիլկներ էին կամ քրդեր (Գ. Բ.):

¹²⁰ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 4, 83-84, 394:

¹²¹ Նույն տեղում, էջ 83-84, 394:

¹²² Նույն տեղում, էջ 388:

¹²³ Նույն տեղում, էջ 387:

¹²⁴ Կոծոխուր կամ ծորենի (ռուս.՝ барбарис), որն օգտագործվել է նաև տնտեսական նպատակներով: Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Ե., 1971, հտ. Ա, էջ 136: Հմմտ՝ Մայիսասենց, նշվ. աշխ., հտ. 1, Ե., 1944, էջ 50:

¹²⁵ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 366:

¹²⁶ Նույն տեղում, էջ 17:

համար նախատեսված կաշվի տեսակ¹²⁷: Հնում՝ մասնավորապես 17-18-րդ դդ., Չնբուշը դարբնության հայտնի կենտրոն է եղել: Վերջինիս զարգացմանը նպաստել են Ծովառի տարածքում մեծ քանակությամբ հանդիպող երկաթի հանքերը: Ղ. Ինճիճյանի խոսքերով «բնակիչք աւանին (Չնբուշի կամ Շենբուշի – Գ. Բ.) յազգես հայոց՝ ըստ մեծի մասին դարբին են արուեստիս» (ընդգծումը մերն է- Գ.Բ.)¹²⁸: Սակայն 19-րդ դ. առաջին տասնամյակներին երկաթի հանույթը հետզհետե սպառվեց, որի հետևանքով դարբնությունը Չնբուշում էապես զիջեց դիրքերը: 20-րդ դ. սկ. երկաթի երբեմնի բովերը՝ հանքանյութի ծուլակտորներով, նշմարվում էին Բաշփիարի թաղի մոտակայքում՝ Ջումաճակ-Աղփիարի (Աղբունար-«Սպիտակ ակ», չնբուշցիների սիրած զբոսավայրերից մեկը) շրջանում¹²⁹: Մեծ համբավ ունեին չնբուշցի հացթուխները: Ընդ որում, գյուղաքաղաքի 6 փռերից 5-ը կենտրոնացած էր հայերի ձեռքում¹³⁰: Արևմտյան Հայաստանի շատ բնակավայրերի նման տեղի հայուհիների շրջանում լայնորեն տարածված էր ոստայնանկությունը (կտաւագործություն)¹³¹:

Չնբուշից շուրջ 1.5-2 կմ արլ՝ բարձունքի վրա գտնվում էր **Սիրահայաց Աբ Աստվածածին** վանքը (Չնբշո վանք): Սրբավայրը հայտնի էր նաև **Աբ Մինաս** անունով, որովհետև այստեղ է պահվել սրբի մասունքը¹³²: Նախապես մենաստանի տեղում եղել է հնագույն Աբ Աստվածածին մատուռը, որի հիմնադրումը՝ հայկական բազմաթիվ սրբավայրերի պես, ժողովուրդը վերագրում էր Աբ Թադևոս Առաքյալին¹³³: Վերոհիշյալ մատուռի տեղում Պողոս վարդապետն ու նրա հետևորդները, որոնք այստեղ էին տեղափոխվել քրդերի կողմից ավերված **Հասարանի** (Ջերմուկի գավառակ) **Աբ Հակոբ** վանքից¹³⁴, 1561 թ. հիմնել են Սիրահայաց Աբ Աստվածածինը: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ այս իրադարձությունը ժամանակային առումով գրեթե համընկնում է Չնբուշ գյուղաքաղաքի հայկական ինքնավար քեհյայության հաստատման հետ¹³⁵: Ընդ որում, մինչև 1895-1896 թթ. համիդյան կոտորածները Սիրահայաց Աբ Աստվածածնի վանահայրերը միաժամանակ Չնբուշի վանական թեմի առաջնորդներն էին: Վանքը մշակութային բացառիկ նշանակություն ձեռք բերեց հատկապես Պողոս վարդապետին փոխարինած և «Մեծն» պատվանունին արժանացած Մարտիրոս վարդապետ Շենբուշցու օրոք, որը շարունակելով Թորոս Տարոնեցու հիմնած Արևմտյան վարդապետարանի ավանդույթները, 1593 թ. Աբ Աստվածածին վանքում հիմնեց միջնադարյան համալսարանների գործը շարունակող վարդապետարան (վարդապետանոց): Նրա, ինչպես նաև Հովհաննես Շենբուշցու, Մարկոս Հացուտցու (Շենբուշցի) և Մինաս Համդեցու առաջնորդության տարիներին՝ մինչև 1680 թ., վանքը դարձավ Հայոց մշակույթի և գրչության նշանավոր կենտրոն¹³⁶: Վանքը նկատելիորեն բարեկարգվեց վանահայր և Չնբուշի առաջնորդ Բաղդասար Տիգրանակերտցու երկարատև գործունեության ընթացքում (1836-1873 թթ.), որի համար ժողովուրդը նրան կոչել է «Մեծ Տետե» (թրք.՝ dede-«հայր») ¹³⁷: Մինչև 1895-1896 թթ. վանքում պահվում էին շուրջ 43

¹²⁷ Տե՛ս Մալխասեսնց, *Նշվ. աշխ., հտ. 7, Ե., 1945, էջ 26: Հմմտ. Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 393:*

¹²⁸ Ինճիճյան Ղ., *Նշվ. աշխ., էջ 240:*

¹²⁹ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ., էջ 20, 387-388:*

¹³⁰ Նույն տեղում, էջ 401:

¹³¹ Նույն տեղում, էջ 402: Չնբուշի արհեստների և բնակչության պատմության մասին ավելի մանրամասն տե՛ս նույն հեղինակի էջ 387-412:

¹³² Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ., էջ 442: Չնբուշի և հարևան Աղիշցի հայերը վանքը կոչում էին Էվանք, որը Գ. Գեորգյանի կարծիքով նշանակում է «Աստուծոյ օթեւան» կամ «Աստուծոյ բնակարան»:* Նույն տեղում, էջ 105:

¹³³ Նույն տեղում: Հմմտ. Փուսուլեան, *Նշվ. աշխ., էջ 10: Լշենք, որ մեր օրերում դեռ պահպանվել են ինչպես Սիրահայաց Աբ Աստվածածնի, այնպես էլ Չնբուշի և Աղիշի եկեղեցիների ավերակները:*

¹³⁴ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ., էջ 107: Ամենայն հավանականությամբ այս մենաստանը գտնվել է Ջերմուկի մոտակայքում (Գ.Բ.):*

¹³⁵ Տե՛ս «Թորոս աղբար», էջ 457: Հմմտ. Ոսկեան, *Նշվ. աշխ., էջ 202-203:*

¹³⁶ Տե՛ս Գեորգեան, *Նշվ. աշխ., էջ 109-110, 192: Սիրահայաց Աբ Աստվածածնի և, ընդհանրապես, Չնբուշի գրչական ժառանգության մասին ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 308-319:*

¹³⁷ Տե՛ս Սրվանձտյանց, *Երկեր-2, էջ 419: Բաղդասար Տիգրանակերտցու մասին մանրամասն տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 132-144:*

ծեռագիր մատյան և ավելի քան 650 տպագիր գիրք¹³⁸: Համիոյան կոտորածներին հաջորդած ավելի քան մեկ տասնամյակ Սիրահայաց Սբ Աստվածածինն ավերակ էր և ամայի¹³⁹: Ըստ Էուբայան, գոյությունը դադարեցրեց նաև վանական առաջնորդարանը, իսկ Չնքուշը՝ Արղնիի և Բալուի հետ միավորվեց Տիգրանակերտին ենթակա միացյալ վիճակին¹⁴⁰: 1908 թ. ի վերջո նշանակվեց նոր վանահայրը՝ Եղիա վարդապետ Սևերակցին (Գազանճյան)¹⁴¹:

2. **Ադիշ** (Ատիշ, Վերին կամ Մեծ) **ավանն** ընկած էր Ծովառի արմ լեռնալանջին՝ Չնքուշից շուրջ 4 կմ հեռավորությամբ: Բնակավայրը նույնպես հիմնել էին Անիից Չնքուշ տեղափոխված հայերը: Նախապես վերջիններս բնակություն էին հաստատել մի փոքր հվարմ գտնվող **Ներքին** (Վարի, նաև՝ Պզտի) **Ադիշում**¹⁴²: Ավելի ուշ ստվարացած բնակչությունն աստիճանաբար տեղափոխվեց **Վերին** (Մեծ) **Ադիշ**¹⁴³, որի հետևանքով Ն. Ադիշը 18-րդ դ. կեսերին ամբողջովին լքվեց և անբնակ դարձավ¹⁴⁴: Ավանն ուներ Սբ Կարապետ անուկով եկեղեցի, ուր պահվում էր Անիից բերված մի հնամենի մագաղաթյա Ավետարան¹⁴⁵: Գործում էր դպրոց: Գ. Սրվանձտյանցի տեղեկություններով Ադիշում կար ևս մի ավերակ եկեղեցի, որը մենք հակված ենք նույնացնելու 17-րդ դ. ձեռագրական հիշատարաններում հիշվող **Սբ Մարոֆի** (Սբ Մալրոֆ) հետ¹⁴⁶: Որոշ տվյալներով 1890-ական թթ. Ադիշն ուներ շուրջ 400 տուն հայ բնակիչ¹⁴⁷: Գյուղը հռչակված էր նոնենիների այգիներով¹⁴⁸: 1895 թ. համիոյան արհավիրքների հետևանքով Ադիշի բնակչության մեծագույն մասը տեղափոխվեց Չնքուշ, մի մասն էլ գաղթեց այլևայլ բակավայրեր: Ճիշտ է, ավելի ուշ որոշ ընտանիքներ վերահաստատվեցին հայրենի գյուղում՝ վերակառուցելով ինչպես եկեղեցին, այնպես էլ դպրոցը: Ավելին, Չնքուշի 1909 թ. ապրիլյան դիմակայության (ինքնապաշտպանության) ժամանակ Ադիշում վերահաստատված հայերը **Բաղշո** (Պալո) **Խաչոյի** ղեկավարությամբ, նույնիսկ օգնության եկան իրենց հայրենակիցներին¹⁴⁹: Սակայն արհավիրքի հետևանքներն ակնհայտ էին: Տիգրանակերտի (Դիարբեքի) առաջնորդարանի վիճակագրության համաձայն Առաջին աշխարհամարտի նախօրեին Ադիշի հայերի թիվը կազմում էր ընդամենը 40 տուն (280 անձ)¹⁵⁰: Ադիշցիների մեծ մասը զբաղվում էր մետաղագործությամբ (դարբնություն, մեխերի պատրաստում): Հատկանշական է, որ 19-րդ դ. Կ. Պոլսում հաստատված մի շարք ադիշցի գերդաստանների ձեռքում էր կենտրոնացած Օսմանյան

¹³⁸ Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 108: *Ձեռագրերից բացի վանքի մատենադարանում եղել է 1 կոնդակ (հաշվարկը՝ ըստ Գ. Սրվանձտյանցի ցուցակի): Տե՛ս Թորոս աղբար, էջ 452-486:*

¹³⁹ Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 111:

¹⁴⁰ Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 161-162:

¹⁴¹ Վանքի և վերջինիս վանահայրերի մասին հիմնավոր խոսում է Գ. Գևորգյանը: Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 105-147: Սիրահայաց Սբ Աստվածածնի մասին տե՛ս նաև Ոսկեան, *Նշվ աշխ.*, էջ 200-214: Հմմտ. Պալեան, *Նշվ աշխ.*, էջ 205:

¹⁴² Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 27

¹⁴³ Տե՛ս Փոստուկեան, *Նշվ աշխ.*, էջ 15:

¹⁴⁴ Ներքին Ադիշում պահպանվել էին կիսավեր եկեղեցու և այլ շինությունների ավերակներ, որոնց պատերին երևում էին խաթարված հունարեն արձանագրությունների մնացորդներ: Ըստ Էուբայան նախկինում գյուղում նույնպես բնակվել են քաղկեդոնական հայեր («հայ-հոռոմներ»): Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 24, 27:

¹⁴⁵ Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 29: Հմմտ. Ծոցիկեան, *Նշվ աշխ.*, էջ 760:

¹⁴⁶ Տե՛ս Սրվանձտյանց, *Երկեր-2*, էջ 420: Հմմտ. «Թորոս աղբար», էջ 454, 463: «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա (1601-1620 ԹԹ.), կապվեցին Վասպեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 186:

¹⁴⁷ Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 76: Գ. Սրվանձտյանցի տվյալներով Ադիշը 1870-ական թթ. վերջին ուներ 300 տուն հայ բնակիչ (տես Սրվանձտյանց, *Երկեր-2*, էջ 420): Այլ տվյալով՝ ավանի հայ բնակչությունը 360 տուն էր: Տե՛ս Ծոցիկեան, *Նշվ աշխ.*, էջ 760: Գ Գևորգյանի մի ծանոթագրությունից պարզվում է, որ հայերի հետ Ադիշում եղել է նաև «քրդական» (իմա՝ դմիկական – Գ. Բ.) փոքր համայնք: Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ.*, էջ 184:

¹⁴⁸ Տե՛ս Ծոցիկեան, *Նշվ աշխ.*, էջ 760:

¹⁴⁹ Տե՛ս Փոստուկեան, 74-75: Հմմտ. Ծոցիկեան, *Նշվ աշխ.*, էջ 760:

¹⁵⁰ «Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին», էջ 393: Հմմտ. Kévorkian, Paboudjian, *Նշվ աշխ.*, էջ 411: Kévorkian, *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir*, էջ 281:

կայսրության առաջատանավերի համար պատրաստվող գամերի (մեխերի) արտադրությունը¹⁵¹: Ավանի հայերը հայտնի էին նաև որպես հմուտ հացթուխներ¹⁵²:

3. **Կեսկես** (թրք.՝ Gısgıs կամ Kiskis) **ավանը** գտնվում է **Ջերմուկից** 10 կմ հյուսիս-արևելք և Արղևիից հվ՝ գրեթե նույն հեռավորության վրա: Տեղանունը հուշում է, որ այստեղ ժամանակին տեղ է գտել հունադավան-քաղկեդոնական հայերի բռնի մահմեդականացում: Այդ մասին են հուշում հատկապես գավառի արևելքում պահպանված առանձին հունարեն գյուղանուններ (**Պալախոռ** կամ **Բալախոռ**, հունարեն՝ «հին գյուղ», Կեսկեսի հարևանությամբ, **Հունիան** (թրքերեն՝ «հույներ»)՝ Արղևիից շուրջ 15 կմ հս-արլ, Արմ Տիգրիսի կամ այդ հատվածում՝ Մադեն գետի աջ ափին են)¹⁵³: Ուշագրավ է, սակայն, որ Դիարբեքիրում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս **Թովմաս Մկրտիչյանի** տվյալներով մինչև Առաջին աշխարհամարտ գյուղում (հեղինակի մոտ՝ «Կըսկիծ»)՝¹⁵⁴ բնակվել են նաև **քրիստոնեությունը պահպանած զգալի թվով հայեր** (ընդգծումը մերն Է.Գ. Բ.): Այս փաստն, ի դեպ, որևէ հայկական այլ աղբյուրում չի հանդիպում: Կեսկեսի բնակչության մյուս մասը թեև գրանցված էր որպես «քիւրտ մահմետական», սակայն սերում էր ժամանակին իսլամ ընդունած հայերից (երբեմնի «հայ-հոռոմներ» կամ «կեսկեսներ»): Հատկանշական է նաև, որ Կեսկեսի 2 համայնքների բնակիչները դիտվում էին միևնույն **կեսան** կամ **կես** ցեղի (աշիրոթ) անդամներ, որոնք, Կեսկեսից բացի, բնակվում էին նաև շրջակա մի շարք գյուղերում (վերջիններիս անվանումները, սակայն, հեղինակը չի նշում): Նույն Թ. Մկրտիչյանի վկայությամբ հայ հոգևորականները հաճախ էին լինում Կեսկեսում, մկրտում էին անխտիր բոլոր բնակիչներին, հատկապես՝ երեխաներին, Նոր տարուն («տարեգլուխ») և տոներին կատարում տնօրինեթի արարողություն, օրինում աղն ու հացը¹⁵⁵:

Ամերիկյան միսիոներական “The Harpoot News” պարբերականի տվյալներով 1880-1890-ական թթ. գավառի **Էնգեչ** (Ականճ) գյուղում նույնպես բնակվել են փոքրաթիվ քրդախոս հայեր (բողոքական)՝ «բոլորովին ուժացած Հայութենե» և ասորիներ¹⁵⁶: Ենթադրելի է, որ հետագա տարիներին նրանք վերջնականապես ծուլվել էին:

1895-1896 թթ. կոտորածների ընթացքում Ջերմուկի գավառի հայ բնակչությունը ծանր կորուստներ է կրել: Ոչ ամբողջական տվյալներով վերոհիշյալ 3 բնակավայրերում զոհերի թիվը կազմում էր շուրջ 1500 մարդ¹⁵⁷: Ընդ որում, Ջերմուկ գյուղաքաղաքում զոհվեց չափահաս արական բնակչության գերակշիռ մասը՝ 550 մարդ գրեթե բոլոր ընտանիքներից (տներից)¹⁵⁸: Հիմնովին ավերվեց և կողոպտվեց Ադիշը, այրվեց նաև եկեղեցին՝ դպրոցի հետ: Գյուղի զոհերի թիվը կազմում էր շուրջ 260 տղամարդ և կին (ի դեպ, իգական սեռի շատ ներկայացուցիչներ առևանգվել էին շրջակա մահմեդականների կողմից)¹⁵⁹: Ինչպես արդեն նշել ենք, ավանի վերապրած բնակիչների մեծագույն մասը ստիպված էր տեղափոխվել Չնթուշ: Վերջինս նույնպես ծանր կորուստներ ունեցավ: Վերապատվելի է. Բիսի տվյալներով գյուղաքաղաքում այրվել էր 103 տուն, իսկ զոհերի թիվը հասնում էր 680-ի:

¹⁵¹ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 388:

¹⁵² Տե՛ս Սրվանձտյանց, Երկեր-2, էջ 420:

¹⁵³ Նույնանուն բնակավայր կար նաև Բալուխ Կարաբեքյան գ-խմբում՝ Միրվան (<Միրաւան) գյուղից ավելի քան 6 կմ հս-արլ՝ Դբնիին միացող Վաթրագոմ կամ Վարդագոմ (թրք.՝ Fatrakum) գետակի աջափնյակում:

¹⁵⁴ Տե՛ս Մկրտիչյան, նշվ. աշխ., էջ 115-116:

¹⁵⁵ Հեղինակի խոսքերով հոգևորականը «Սիրութիւն կուտայ ամենուն և կը խոստովանցնէ»: Հետաքրքիր է, որ ցեղային առումով կեսանը միավորված էր Սևերակից հարավ բնակվող Կարաբեչի քրդական աշիրոթի հետ («Կեօչէպեր» Գարա-Թէշի), անգամ՝ մտնում էր համիրիեական համակարգի մեջ: Տե՛ս Մկրտիչյան, նշվ. աշխ., էջ 116:

¹⁵⁶ Տե՛ս Գեորգեան, նշվ. աշխ., էջ 185:

¹⁵⁷ Հաշվարկել ենք ըստ հետևյալ աղբյուրների. Պարսամեան, նշվ. աշխ., էջ 49, հմմտ. էջ 63: Bliss, նշվ. աշխ., էջ 437:

¹⁵⁸ Տե՛ս Պարսամեան, նշվ. աշխ., էջ 49: Վերապատվելի է. Բիսի խոսքերով՝ վերապրել էին միայն «փոքրաթիվ տղամարդիկ»: Տե՛ս Bliss, նույն տեղում:

¹⁵⁹ Տե՛ս Bliss, նշվ. աշխ., էջ 436, 438:

Լայն տարածում գտավ բռնի մահմեդականացումը¹⁶⁰: Ընդ որում, գյուղաքաղաքը ենթարկվեց ոչ միայն հարևան, այլև բավական հեռու ընկած բնակավայրերից (Արդևի, Սևերակ) հավաքված խուժանի հարձակմանը: Չնքուչում կոտորածն ավելի մեծ ծավալներ չստացավ միայն որոշ հատվածներում (Բերդի, Շուկայի և Ծովառին հարող թաղեր) հայերի կողմից կազմակերպված ինքնապաշտպանության շնորհիվ¹⁶¹: 19-րդ դ. 90-ական թթ. վայրիվերումները որոշակի բացասական ազդեցություն ունեցան տեղի հայության վիճակագրական իրավիճակի վրա: Տարբեր տվյալներով, միայն Չնքուչ գյուղաքաղաքից հեռացածների թիվը կազմում էր 400-500 տուն, որոնք բնակություն հաստատեցին Մաղեն, Սևերակ, Ջերմուկ, Դիարբեքիր, Խարբերդ, Մալաթիա քաղաքներում, ինչպես նաև՝ Խարբերդի վիլայեթի Կարկառ (Կերկեր) և Շիրո (Զեֆերդիզ) գավառակների այլևայլ գյուղերում, որոնց հետ չնքուչիները վաղուց ի վեր ունեին տնտեսական սերտ կապեր: Ընդ որում, Մ. Փոստոլյանի տվյալներով Մաղենի, Ջերմուկի և Սևերակի հայ բնակչության զգալի մասը՝ «գրեթե կեսը», դուրս էր եկել Չնքուչից: 1908 թվականից արտագաղթ սկսվեց նաև ԱՄՆ¹⁶²:

1909 թ. Կիլիկիայի հայկական կոտորածները խիստ լարված իրավիճակ ստեղծեցին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում, այդ թվում՝ նաև Չնքուչում: Տեղի թուրք բեյերը, շրջակա դմիկական և քրդական ցեղապետերի հետ համատեղ, պատրաստվում էին նոր կոտորածներ հրահրել: Կանխելու համար արհավիրքը, տեղի հայությունը միավորվեց ինքնապաշտպանության ղեկավար, Վերակազմյալ հնչակյան կուսակցության մասնաճյուղի պետ, Սահակյան վարժարանի ուսուցիչ **Կարապետ Յանգընյանի** (Եանկընեան, հետագայում՝ **Տեր Արշեն** քահանա)¹⁶³, վերջինիս օգնականներ՝ **Տեր Ղևոնդ** քահանայի (ադիշցի), բողոքական պատվելի **Արմենակ Գյուլյանի** (Կիլեան), կաթոլիկ համայնքի ժողովրդապետ **Աստոն** վարդապետ **Թերզիբաշյանի**, ինչպես նաև առանձին ջոկատների հրամանատարներ **Թելո Պալոյի**, **Պոզոյենց Գոջոյի**, **Էզրմանենց Հաջի Ավետիսի** շուրջ¹⁶⁴: Չնքուչի հայրենակիցներին օգնության եկավ նաև Ադիշի ջոկատը՝ **Բաղո (Պալո) Խաչոյի** գլխավորությամբ (տես վերևում): Ստեղծվեցին 32 դիրքեր, ուր տեղակայված շրջիկ խմբերը՝ 380-400 մարտիկներով, իրականացնում էին գյուղաքաղաքի հայաբնակ թաղերի անվտանգության հսկողությունը¹⁶⁵: Ընդհանուր առմամբ 1909 թ. Չնքուչի դիմակայությունը (ինքնապաշտպանությունը) որոշ ընդմիջումներով տևեց 21 օր՝ ապրիլի 13-ից մինչև մայիսի 10-ը: Պաշտպանների անվեհերության և աչալրջության շնորհիվ տեղի թուրք բեյերի հրահրմամբ գյուղաքաղաքը պաշարած 20000-անոց մահմեդական խուժանին այդպես էլ չհաջողվեց սադրանքների միջոցով հայերին ներթափել ընդհարումների մեջ: Որոշակի դրական դեր խաղացին նաև Չնքուչի գավառակապետի (թրք.՝ müdür) խոհեմ քայլերը, որոնց հետևանքով կանխվեց ջարդարար խմբերի թափանցումը գյուղաքաղաք: Ոչ պակաս կարևոր էր նաև Չմմառի հայ-կաթողիկե միաբանության անդամ (Լիբանան) չնքուչի **Գրիգոր** վարդապետ **Մանուչյանի** դերը, որի ջանքերով ի վերջո վերացվեց Չնքուչի պաշարումը¹⁶⁶: Ինքնապաշտպանության նախապատրաստական աշխատանքներ տարվեցին

¹⁶⁰ Լույն տեղում, էջ 436:

¹⁶¹ Ավելի մանրամասն տե՛ս Գեորգեան, էջ 60-63: Անհատական, բայց անհաջող ինքնապաշտպանական մարտեր են մղել նաև Ջերմուկի որոշ ընտանիքներ: Տե՛ս Պարսամեան, Նշվ. աշխ., էջ 60:

¹⁶² Տե՛ս Փոստոլյան, Նշվ. աշխ., էջ 28-29: Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 76, 84:

¹⁶³ 1915 թ. Տեր Արշենը փորձեց Դիարբեքիրի գավառներում կազմակերպել համընդհանուր ինքնապաշտպանություն, որի համար մեկնեց նախ՝ Մաղեն, ապա՝ Դիարբեքիր, բայց սպարոյուն: Չնքուչ վերադառնալիս նա դավադրաբար սպանվեց թուրքական իշխանությունների կողմից: Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 96:

¹⁶⁴ Տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 86:

¹⁶⁵ Լույն տեղում:

¹⁶⁶ Չնքուչի դիմակայության (ինքնապաշտպանության) մասին մանրամասն տե՛ս Գեորգեան, Նշվ. աշխ., էջ 86-91: Հմմտ. Փոստոլյան, Նշվ. աշխ., էջ 60-88:

Նաև Ձերմուկում տեղի ՀՅԴ ենթակամիտեի կողմից: Բարեբախտաբար այս անգամ նոր արյունահեղությունը կանխվեց տեղի նորանշանակ գավառապետի (թրք.՝ kaymakam) ողջամտության շնորհիվ¹⁶⁷:

Ձերմուկի գավառի հայությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց 1915 թ.: Ընդ որում, թե՛ գավառակենտրոնի, թե՛ Չնքուշի և Ադիշի տեղահանված բնակչության համընդհանուր գերեզմանը դարձավ Չնքուշ (Ծովառ) գետակի հովտում գտնվող Դուդան (Տուտան կամ Սագալ-թութան) ահասարսուռ կիրճը¹⁶⁸: Տեղահանությունից խուսափած և Ծովառի քարանձավներում ապաստանած չնքուշցի 40-80 քաղաքացիներ՝ Թորոս Նուրիխանյանի գլխավորությամբ, շուրջ մեկ ամիս դիմադրեցին ջարդարարներին: Սակայն ուժերը խիստ անհավասար էին և բոլորն էլ զոհվեցին 1915 թ. ամռանը¹⁶⁹: Է. Նոյեյի տվյալներով Ձերմուկի գավառի ավելի քան 18000 հայերից 1919 թ վերապրել էր ընդամենը 300 մարդ¹⁷⁰: Ցեղասպանության ծավալները հատկապես ցայտուն կերպով երևում են Չնքուշի բնակչության հետագա տարիների շարժընթացին (դինամիկա) հետևելիս: Երբեմնի բազմամարդ այս գյուղաքաղաքը Թուրքիայի 1955 թ. մարդահամարի տվյալներով ուներ ընդամենը 1598¹⁷¹, իսկ 1960-ին՝ 1526 բն. (190 տուն)¹⁷²: Փաստորեն, ցեղասպանությունից ավելի քան 40 տարի անց գյուղաքաղաքում լավագույն դեպքում ապրում էր 1915 թ. բնակչության միայն 10 %-ը¹⁷³:

ՀԱՎԵԼՎԱԾ. ՁԵՐՄՈՒԿԻ ԳԱՎԱՌԻ ԵՐԲԵՄՆԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԸ

1. **Ձերմուկի գավառակ** (Հասարան). Ազրակ (ուներ ավերակ եկեղեցի, թրք.՝ Ekrek), Ալոս կամ Ալիվոս (մոտակայքում՝ Թիլ լեռնագագաթ), Աղոմատ կամ Գոնաքի Աղմատ¹⁷⁴, Անկաճ (Էնգեշ), Բագվենք կամ Բաղվանք < Բագվանք (թրք.՝ Bağvenk), Բաղնիք (թրք.՝ Pağnik կամ Panik), Բեդվան < Բերդվան¹⁷⁵ (Վերին և Ներքին, թրք.՝ Bedvan), Բեդրոս < Պետրոս (թրք.՝ Bedros), Բոկսոր < Բոխ(ե)ձոր (թրք.՝ Poksor), Բուրուտ (թրք.՝ Bürüt), Չերգյոզ (թրք.՝ Zergöz) < Ծառկոց¹⁷⁶ կամ Ծառկից¹⁷⁷, Չիմմեկ (թրք.՝ Zemayek կամ Zimmek) < Ծմակ, Թիրվիրեկ (թրք.՝ Tirvirek) < Տիրավերակ, Թթենիկ (ամայի), Խանդակ (թրք.՝ Handek), Խաչմելիք կամ Խաչմեռուկ (թրք.՝ Hacimelik), Կիրակոս (թրք.՝ Giregös կամ Giregöz), Հաբըրման կամ Հավուրման (ուներ ավերակ եկեղեցի, թրք.՝ Haburman), Հասնո (թրք.՝ Hasno) կամ Հասարան¹⁷⁵, Հացուտ > Հասուրթ (ուներ ավերակ եկեղեցի)¹⁷⁶, Հաստո (թրք.՝ Hasto) < Հացտուն,

¹⁶⁷ Տե՛ս Պարսամեան, *Նշվ աշխ*, էջ 72-74:

¹⁶⁸ Դուդանը գտնվում է Չնքուշից շուրջ 10 կմ արլ և ունի 270 մ խորություն: Մինաս Համդեցու «Օրագրությունում» հիշատակվում է Հոր անունով, որով հայտնի էր հայկական միջավայրում: Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ*, էջ 19, 93-101: Հմմտ. Փոստուլեան, *Նշվ աշխ*, էջ 26: Պարսամեան, *Նշվ աշխ*, էջ 87-88: «Diyarbakir. Travel Guide», էջ 147:

¹⁶⁹ Գեորգեան, *Նշվ աշխ*, էջ 98-99:

¹⁷⁰ Տե՛ս «Diary of Major E. Noel», էջ 12-13:

¹⁷¹ Տվյալներն ըստ «Türkiye ansiklopedisi», cilt 2, Ankara, 1956, էջ 83:

¹⁷² Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ*, էջ 85:

¹⁷³ Ի դեպ, միայն 2011 թ. Չնքուշի բնակչությունը հասել է 1915 թ. մահմեդական բնակչության երբեմնի թվաքանակին՝ 2495 բն. (տես «Diyarbakir. Travel Guide», էջ 138):

¹⁷⁴ Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ*, էջ 23: Նաև Կոնաճի (թրք.՝ Konağrı), որը Ձերմուկի գավառի հարավարևմտյան գավառակներից էր (թրք.՝ nahıye):

¹⁷⁵ Մեր կարծիքով գյուղի մոտակայքում էր գտնվում գավառի կենտրոնական Հասարանի բերդը, որտեղից, ի դեպ, բնակավայրի ժամանակակից անունը (որոշակի աղճատումով): Միրահայաց Աբ Աստվածածին վանքի Գավապանագրքի հեղինակ Մովսես վարդապետը (վանքի միաբաններից) մենաստանի հիմնադիր Պողոս վարդապետի մասին խոսելիս նշում է, որ նա «էր յերկրէն Հասարանայ, որ է նահանգէն Ձերմուկայ, եւ այժմ ասի Հասարանայ գալայ (թրք.՝ Hasarankale, վապայերեն՝ Hüsnüran-Գ. Բ.), ուր էր վանքն երկրին մեր, զոր քակեալ աւերէին ազգն քրդաց»: Տե՛ս «Թորոս աղբար», էջ 457-458: Հմմտ. «Diyarbakir travel Guide», էջ 126:

¹⁷⁶ Այս գյուղից էր Մարկոս վարդապետ Հացուտցին՝ Միրահայաց Աբ Աստվածածին վանքի վանահայրը, Չնքուշի առաջնորդը 1643-1679 թթ.: Տե՛ս «Թորոս աղբար», էջ 458: Հմմտ. Ոսկեան, էջ 204, 212: Գյուղը հիշատակվում է նաև Մինաս Համդեցու «Օրագրությունում»: Տե՛ս Գեորգեան, *Նշվ աշխ*, էջ 591:

Լշենիկ (թրք.՝ Nişenik)¹⁷⁷, Շինտո (թրք.՝ Şinto) < Շենտուն¹⁷⁷, Շեյխան կամ Շեխլար (Վերին և Լեռքին), Սարսափ¹⁷⁸, Սզնուկ (թրք.՝ Süznük) < Սզնիք կամ Սզենիք, Սինակ կամ Սինեկ (թրք.՝ Sinek), Տերտերիգեդ (թրք.՝ Derdereköy), Փոխսոր (թրք.՝ Pohsur) < Փոխծոր (թրք.՝ Phosur) < Փողծոր¹⁷⁹, Բարվանչիման (թրք.՝ Kervançimen) < Բարվանք, Բևան (թրք.՝ Kevan) < Գեղվան(ք)¹⁸⁰:

2. **Չնքուշի գավառակ**. Ագհար¹⁸¹, Ալիպուշաղ (թրք.՝ Elifuşağı), Ալիոս (թրք.՝ Alyoz) կամ Ավիոս¹⁸², Գագաթներ (20-րդ դ. սկ.՝ ամայի)¹⁸³, Գըլգըլիկ (20-րդ դ. սկ.՝ լքված, տարածքում այգիներ էին)¹⁸⁴, Գոմեր (ամայի), Գոտանի (լքված, 19-րդ դ. կեսերին դեռ բնակեցված էր)¹⁸⁵, Դերդեր կամ Տերտեր, Ենիքոյ կամ Ենգիքոյ (17-րդ դ. գյուղում ձեռագրեր են ընդօրինակվել)¹⁸⁶, Զիվար/Զիյար (Զիվր) < Զվար կամ Ծովեր¹⁸⁷, Թլեթևակ (ամայի)¹⁸⁷, Ինգիլդերե (թրք.՝ Ingildere) < Անգեղծոր¹⁸⁸, Խոյա (թրք.՝ Hoya կամ Huya)¹⁸⁹, Խրիբզվիհնար (ամայի)¹⁹⁰, Ծովդերե (թրք.՝ Cevdereköy), Կազո (թրք.՝ Gezo) < Կծու¹⁹¹, Կարաքիլիսա (մոտակա լեռնագագաթի անունն է Սրբան, իմա՝ Սրբոց լեռ կամ Սուրբք)¹⁹², Կիշ կամ Քիշ, Ղզըլկոզ կամ Ղզըլկոլ (ամայի), Սիդվա(ն) կամ Սեդիա, Շեն կամ Նորշեն (թրք.՝ Norşin), Չարթոմ < Չըրգոմ¹⁹³, Սալվազ կամ Սալվաս, Վանք կամ Անապատ (չի բացառվում, որ այստեղ պահպանված

¹⁷⁷ Ըստ Թ. Արապյանի Լշենիկը մինչև 1915 թ «կուտ հայաբնակ» էր՝ 150 տուն (!) բնակչությամբ (տես Արապյան, Լշվ. աշխ., էջ 278): Ցավոք, փաստը հավաստող որևէ այլ տվյալ չկա:

¹⁷⁸ Մոտակայքում պահպանվել էր ընդարձակ բնակատեղի՝ Դիարբեքիր (!): անունով Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 23:

¹⁷⁹ Կարծում ենք, որ գյուղանունն ունեցել է նախնական «նեղ ձոր» իմաստը: Տե՛ս Աճառյան, Լշվ. աշխ., հտ. 4, Ե., 1979, էջ 512:

¹⁸⁰ Ձերմուկ գետի աջափնյակում՝ զապայաբնակ («քրտաբնակ») Պեսնի կամ Բեսին (թրք.՝ Besinköyü) գյուղում, ավերակ շենքի մոտ շինարարական աշխատանքների ժամանակ պատահաբար գտնվել են ցնարակված («փայլուն») ու նախշապարդ սալաքարեր, ինչպես նաև՝ «սրբատաշ քարերով, քանդակազարդ սեղան մը» (20-րդ դ. սկ.): Ըստ Գևորգյանի ենթադրության՝ դրանք երբեմնի հեթանոսական մեծաքանակ մնացորդներ էին: Ընդ որում՝ նշված գյուղի մոտ պահպանվել էին երբեմնի խճուղու խոտածածկ հետքերը: Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 23:

¹⁸¹ Հիշատակվում է Մինաս Համդեցու «Օրագրությունում»: Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 584:

¹⁸² Հիշատակվում է Մինաս Համդեցու «Օրագրության» մեջ՝ «Ալիոս» (տես Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 584): 1723-1725 թթ. Սիրահայաց Սբ Աստվածածնի վանահայրն էր Եղիապար վրդ Ավիոսցին (Ավիալուցի՝ 18-րդ դ. սկ.՝ արեղա: Տե՛ս Թորոս աղբար, էջ 457): Ընդ որում, Գ. Սրվանձոյանցի մոտ, ընդօրինակման սխալի հետևանքով, Եղիապար վարդապետը դարձել է «Ավիալուցի», որն էլ՝ ոչ ճիշտ ձևով ներկայացվել է «Ալեսորցի» (տույն տեղում, էջ 459):

¹⁸³ Բարտեպագրական նյութը թույլ է տալիս ենթադրելու, որ Չնքուշից հս (կամ՝ հս-արլ) ընկած Գագաթներ և Գոմեր գյուղերը 20-րդ դ. սկ. լքված էին (Գ. Բ.):

¹⁸⁴ Տե՛ս Փոստլեան, Լշվ. աշխ., էջ 10:

¹⁸⁵ Նույն տեղում:

¹⁸⁶ Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 192-193:

¹⁸⁷ Մի քանի անգամ հիշատակվում է Մինաս Համդեցու «Օրագրությունում»: Ի դեպ, գյուղն ուներ քահանա, հետևաբար՝ եկեղեցի: Գ. Գևորգյանի խոսքերով՝ «ԺԹ դարուն արդեն ավերակ էր եւ անոր անունը չէրելիք քարտեսներու վրայ»: Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 602:

¹⁸⁸ Վերոհիշյալ շարքում հանդիպող Թյուրք-Տորք և Ինգիլդերե-Անգեղծոր գյուղերը, ըստ Էուրյան, տարածաշրջանի հնագույն Անգեղտուն տեղանվան, ինչպես նաև՝ Անգեղյա Տորքի պաշտամունքի վերհուշն են:

¹⁸⁹ Չնքուշի հայերը 19-րդ դ. «քրտացած» այս գյուղի բնակչության հետ գտնվել են հաճախակի ընդհարումների մեջ: Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 3:

¹⁹⁰ Տե՛ս Փոստլեան, Լշվ. աշխ., էջ 10:

¹⁹¹ Կապո և Նորշին գ-երը հիշվում են Մինաս Ամթեցու «Օրագրությունում»: Տե՛ս Գեորգեան, Լշվ. աշխ., էջ 583:

¹⁹² Տե՛ս ԽՍՀՄ ՉՈՒ քարտեզի J-37-16 պլանշետ: Չենք բացառում, որ բնակավայրում ևս եկեղեցու (վանքի) մնացորդներ էին պահպանվել (Գ. Բ.):

¹⁹³ Կոչվել է նաև Բ(Գ)երմաքոմ < Չերմագոմ:

լինեին հայկական սրբավայրի մնացորդներ), Փիրան, Անտեր կամ Անթեր, Զեսիկթյուփու¹⁹⁴, Զիլիսամեշաթ (Զիլիսա) կամ Զիլիսեթախթամեշաթ¹⁹⁵, Զյունդաշի:

3. **Կեսկեսի գավառակ**. Բալախոր կամ Ներքին Բալախոր (ուներ ավերակ եկեղեցի), Բերվան, 2-րդ **Ենիթյոյ** (ուներ ավերակ եկեղեցի), Չանգաթիլ < Ծաղկաթիլ (ուներ ավերակ եկեղեցի), Թիխըձոր կամ Վերին Բալախոր (ուներ ավերակ եկեղեցի), Լադարի (ուներ ավերակ եկեղեցի), Կարմիրքար (ուներ ավերակ եկեղեցի, թրք.՝ Kızılcā), Կեսկես (Կիսկիս), Միատուն (թրք.՝ Miyadon), Ուգումի (թրք.՝ Uğümü) < Ո(Օ)կումի (հմմտ.՝ Բասենի պատմական Օկումի (Ոկումի) գյուղանունը):

4. **Ագրակ գետակի ձորահովիտ**. Ագրակ (թրք.՝ Ekrek, որից էլ Եփրատ թափվող գետակի անունը), Ավուտ < (Հ)ովիտ (Վերին և Ներքին, թրք.՝ Aşağı և Yukarı Avut)¹⁹⁶, Արմիա (թրք.՝ Ermiye), Արտըվա(ս) կամ Արտըվո, Թլակ (թրք.՝ Tilek), Թյուրք (թրք.՝ Türk Yeniceavut), Սարսափ:

Մինչև 1880-ական թթ. կեսը Չերմուկի գավառի մասն է կազմել նաև **Աբուլթահիրի** (Աբդըրհեր) գավառակը՝ որը 20-րդ դ. սկ. վարչականորեն մտնում էր Խարբերդի վիլայեթի Արդանայի սանջակի կազմում¹⁹⁷: Գավառակի բնակավայրերն ձգվում էին Եփրատի ոլորանի երկայնքով՝ Ագրակի գետահովտից արմ: Նշված տարածքում ևս պահպանվել էին երբեմնի հայաբնակ մի քանի գյուղեր՝ Աբուլթահիր կամ Աբդըրհեր (Ապտըրհեր), Այվաս (Վերին և Ներքին), Էլգուկ կամ Էլգյուղ (Վերին և Ներքին, թրք.՝ Elgük)¹⁹⁸ < Եղեգիկ՝ Զարորմի («բար+որմի», թրք.՝ Karormi), Ֆենկ կամ Վանթ (թրք.՝ Fenk):

ՄԻԴԻԱԹԻ ԳԱՎԱՌ

Գրավում էր Արևմտյան Տիգրիսից հարավ տարածվող արևելյան շրջանները: Համապատասխանում է հայ պատմիչների կողմից հիշատակվող հնագույն **Ճավդեթ** (հունահռոմեական աղբյուրներում՝ Zabdikenæ) երկրամասին: Վերջինս ասորական սկզբնաղբյուրներում հայտնի է **Տուռ Աբդին** անունով (նաև՝ **Տուր**, հայերը կոչել են «**Տուրա գավառ**»), որը տարածված ստուգաբանության համաձայն նշանակում է «**Աստծո ծառաների** (հմա՝ հավատացյալների) լեռ»¹⁹⁹: Միդիաթի գավառը սահմանակից էր հյուսիսից, Արևմտյան Տիգրիսի հունով՝ Բշերիկին և Խարզանին, արևելքից, Տիգրիսի վերին հոսանքի երկայնքով՝ Արվախին կամ Էրուհին (Խարզանն ու Արվախը Բիթլիսի վիլայեթի կազմում էին), հարավից՝ Չեգիրեի և Մծբինի կամ Նիսիբիսի, իսկ արևմուտքից՝ Մարդինի և Սավուրի գավառներին:

Միդիաթն ասորական հոգևոր-մշակութային խոշոր կենտրոններից էր: 20-րդ դ. սկզբին այստեղ գործում էին բազմաթիվ հնագույն սրբավայրեր (Ներկայումս՝ գրեթե ամբողջությամբ ավերված կամ լքված), որոնցից նշանավոր էին՝ **Այն-Վարդո** կամ **Ինվարդո** (հյր.՝ «վարդաղբյուր»), **Սբ Գաբրիել** կամ **Կարթամին** (4-6-րդ դդ.), **Դեր Կուբա (Զեֆա)**,

¹⁹⁴ Տե՛ս Փոստոլեան, *Նշվ. աշխ.*, էջ 10: Չնբուշից շուրջ 6-6.5 կմ հվ-արլ ընկած այս գյուղի մասին հեղինակը հետևյալն է նշում. «...այսօր յստակօրէն կը տեսնուի եկեղեցիին հիմերը» (ընդգծումը մերն է- Գ. Բ.):

¹⁹⁵ 2-րդ անվանաձևը մոտակայքում գտնվող համանուն լեռնանունից (Ժամանակակից Չիարթթ լեռնագագաթ), որը Մինաս Չամդեցու «Օրագրությունում» հիշատակված է «Թախթան Մաշատն» ձևով: Տե՛ս ԳԷ-որգեան, *Նշվ. աշխ.*, էջ 581): Չենթ բացառում, որ բնակավայրում ևս եկեղեցու (վանքի) մնացորդներ էին պահպանվել (Գ. Բ.):

¹⁹⁶ Կարծում ենք Մինաս Չամդեցու հիշատակած Ովնուտն է, որտեղից 7 ժամում հեղինակը հասել է Չերմուկի հարևան Հաբրման գյուղ: Տե՛ս ԳԷորգեան, *Նշվ. աշխ.*, էջ 589:

¹⁹⁷ ԳԱԹ, Թ. Ապատյանի ֆոնդ, 3-րդ բաժին, վավերագիր № 44, թ. 1: Ուշագրավ է, որ Խարբերդի թեմի 1878 թ. մի վիճակագրության համաձայն Աբուլթահիրի գավառակում ապրել է 200 տուն հայ: Տե՛ս Խույն տեղում, թ. 5:

¹⁹⁸ ԽՍՀՄ ՉՈՒ քարտեզի J-37-16 պլանշետում՝ Эбзюк:

¹⁹⁹ Մենաստանների և այլ սրբավայրերի մեծ թիվը նկատի ունենալով: Այլ ստուգաբանությամբ, տեղանունը հետևանք է 6-7-րդ դդ. պարսկա-հռոմեական պատերազմների և նշանակում է «գերիների («ստորուկների») լեռ»՝ երկրամասի բնակավայրերում մեծաքանակ ռազմագերիների բնակություն հաստատվելու պատճառով: Այս առումով կա այլ բացատրություն ևս՝ հռոմեական Տուռ Աբդին ամրոցի անունից: Տե՛ս Gaunt, *Նշվ. աշխ.*, էջ 183-184: Տուռ Աբդինի մասն են համարվել նաև Մարդինի և Մծբինի (Նուսայբին) գավառները:

Դերսալիբ (ասոր.՝ Dayro da Şlibo, թրգմ.՝ Սբ Խաչ), **Մար**²⁰⁰ **Աբրահամ**, **Մար-Էլիյա** կամ **Էլիյո** (Սբ Եղիա), **Դեր Յադդադ** (Յադդո), **Մար Խուշաբա** (ասոր.՝ Mor Had Bshabo), **Մար Մալթե** կամ **Մար Մելթոն** (հյր.՝ **Սբ Արթա** կամ **Սբ Թագավոր**, իմա՝ **Երկնային Արթա**, **Յայր Աստված**, ասոր.՝ Mor Malke Qluzmoyo), **Մար Յադուբ** (Սբ Յակոբ), **Մար Շարբել** կամ **Մար Շերբել** վանքերը և **Սբ Ադդե** (Յաշտարակ-Աշտարակ գյուղ, 1-ին դ.), **Սբ Աստվածամայր** (Յախ գ., 6-րդ դ.), **Մար-Ազազել** (ասոր.՝ Mor Azazael, **Զֆարգե** գ., 10-րդ դ.), **Սբ Կիրակոս** (Եկեղեցի, Առնաս գ., 761 թ.) հնակառույց եկեղեցիները:

Ժամանակին հայերը **Միդիաթի գավառում** կազմում էին բնակչության զգալի մասը, ինչի մասին են խոսում առ այսօր պահպանված հայեցի մի շարք տեղանուններ (**Յախ** կամ **Խախ**, ասոր.՝ Hah²⁰¹, **Յաշտարակ-Աշտարակ**, ասոր.՝ Shterako, Estrako, նաև՝ Heshterek²⁰², **Ջերմուկ** լեռնագագաթ՝ Արմ Տիգրիսի հարավային ափին ևն): Սակայն պատմական անբարենպաստ պայմանների հետևանքով շատ հայեր (նաև՝ ասորիներ) բռնի կերպով կրոնափոխվել և ձուլվել են²⁰³: Մեծ եղեռնի նախօրեին հայեր էին բնակվում գավառի վարչական կենտրոնում՝ համանուն քաղաքում (նաև՝ Միդիադ), ինչպես նաև **Յիսն-Զեյֆ** կամ **Յասանթեֆ** և **Զերբուրան** (ասոր.՝ Kfar-Boran կամ Karkh-Buran) ավաններում: Դիարբեքրի առաջնորդարանի 1913 թ. վիճակագրության տվյալներով նրանց թիվն անցնում էր 1450-ից²⁰⁴: Ցավոք, ստույգ կամ նույնիսկ մոտավոր տվյալներ գավառակենտրոնում ապրող հայ բնակչության մասին, բացակայում են: Յայտնի է միայն, որ **Միդիաթ** քաղաքը գրեթե ամբողջությամբ բնակեցված էր քրիստոնյաներով (ավելի քան 2000 տուն, գերակշիռ մեծամասնությունը՝ ասորիներ): **Յիսն-Զեյֆ** կամ **Յասանթեֆ** ավանը (ըստ Ղ. Ինճիճյանի՝ պատմական **Գևնի**, ասոր.՝ Hasno կամ Hesno-d'Kifo) գտնվում էր Արմ Տիգրիսի աջ ափին և Տուռ Աբդինի նախադուռն էր: Ավանի հիմնականում ժայռափոր տները բարձրանում էին գետի զառիվայր ափերին: Նշանավոր էին Արմ Տիգրիսի վրա կառուցված հինավուրց կամուրջը (այժմ՝ ավերակ) և բերդը, որը Բյուզանդական կայսրության **Վերին Միջագետք** կամ **Չորրորդ Յայթ** եպարքիայի (նահանգի) հայտնի ամրոցների շարքում հիշատակում է 6-րդ դ. պատմիչ **Գևորգ Կիպրացին**՝ Յոնսկեֆաս անունով (հնր.՝ Ρισκηφάς): Ավանի շրջակայքում պահպանվել էին միջնադարյան բնակավայրի ավերակներ, իսկ շուրջ 5 կմ արլ՝ դարձյալ Արմ Տիգրիսի աջ ափին, ներկայիս **Դֆնի** կամ **Դուֆնի** (ասոր.՝ Difni կամ Dufne) գյուղի մերձակայքում նշմարվում էին մենաստանի մնացորդներ²⁰⁵: 19-րդ դ. սկ. հայերը կազմում էին **Յիսն-Զեյֆի** բնակչության կեսը՝ 150 տուն²⁰⁶: Յետագա տասնամյակներին, սակայն, հայ բնակչության թիվն Էապես նվազել էր: Նույն ժամանակահատվածում, ասորական սկզբնաղբյուրների համաձայն, **Միդիաթի** գավառի շուրջ 6 տասնյակ բնակավայրերում ասորի բնակչության թիվը կազմում էր նվազագույնը 4800 տուն (շուրջ 26 000 մարդ): Կարծում ենք, սակայն, որ ասորի բնակչությունն իրականում ավելին էր՝ 30 000-ից ոչ պակաս²⁰⁷: Բազմամարդությամբ աչքի էին ընկնում **Անհալ** կամ **Անեել**, **Առնաս** (ասոր.՝

²⁰⁰ Ասորերեն *mar* կամ *Snur* Աբդինի (*turayo*) բարբառով՝ *mor*, իմա՝ «սուրբ», նաև՝ «տեր»:

²⁰¹ Հմմտ. *Խախ*՝ Երվնկայի մոտ, *Խախու*՝ Թորթոնի գավառում ևն:

²⁰² 19-րդ դարավերջի ռուսական 10-վերստանոց (ժամանակակից մասշտաբով՝ 1:420000) քարտեզում *Xewmepeke*:

²⁰³ Այս տեսանկյունից բնորոշ է Միդիաթի և Սավուրի սահմանագլխին բնակվող Մահալլեի քրդական ցեղի (աշիրեթ) մասին ավանդապոստը: Տե՛ս Mark Sykes, *The Khalif 's Last Heritage. A Short History of the Turkish Empire*, New York, 1973 (1915 թ. Լոնդոնում հրատարակված գրքի արտատպությունը), p. 578.

²⁰⁴ Տե՛ս Kévorkian, Paboudjian, *նշվ. աշխ.*, էջ 415: Հմմտ.՝ Kévorkian, *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir*, էջ 282:

²⁰⁵ Ըստ Դ. Գաունթի, *Դֆնին* նույնանում է Գևորգ Կիպրացու գործում հիշատակվող *Դաֆնուդին* (հնր.՝ Δαφνούδις, լատն.՝ *Daphnoudis*) ամրոցի հետ: Տե՛ս Gaunt, *նշվ. աշխ.*, էջ 219:

²⁰⁶ Յիսնականում ջորեպաններ էին (գաթըրճի): Տե՛ս Ինճիճեան, *նշվ. աշխ.*, էջ 234:

²⁰⁷ Յիսնական թերությունը դարձյալ քրիստոնյա բնակչության թվի թերհաշվառման բարձր տոկոսն է: Օրինակ՝ հասու սկզբնաղբյուրների համաձայն (Իսահակ Արմելլե, Աղա Պատրուս և ուր.), Միդիաթ քաղաքում Առաջին աշխարհամարտի նախօրեին ապրել է 4000-7000 բնակիչ, որից շուրջ 70%-ը հակոբիկյաններ, 30%-ը՝ կաթոլիկ ասորիներ, քիլդանիներ, հայեր, նաև՝ սակավաթիվ մահմեդականներ (տես Gaunt, *նշվ. աշխ.*, էջ 191,

Urdu), **Այն-Վարդո** (հնվարդո), **Բաթի** կամ **Բոթե**, **Բասբրին** (ասոր.՝ Basibrino կամ Beth Sbirino), **Դերսալիբ**, **Չագ**, **Էրդի** (ասոր.՝ Jardo), **Խախ** կամ **Հախ** (ասոր.՝ Hah), **Բակըսան** կամ **Կուստան** (ասոր.՝ Boqusyono), **Հասբսնաս**, **Հիսն-Զեյֆ**, **Մզիզա(հ)**, **Միդուն** կամ **Մեդդի**, **Սալեհ** կամ **Սալահ**, **Սարե**, **Զաֆրո** **Էլայթո** (ասոր.՝ «վերին գյուղ»), **Զերբուրան**, **Զֆարզե** ավաններն ու գյուղերը:

Քրիստոնյաների նկատմամբ հալածանքները **Միդիաթի** գավառում սկսվեցին արդեն 1914 թ. ամռանը: Օսմանյան զինակոչի (թրք.՝ seferbirlık) հայտարարումով Միդիաթի արական բնակչության մի մասը զորակոչվեց թրքական բանակ և հետագա ամիսներին կոտորվեց: Միդիաթի գավառում կոտորածները զանգվածային բնույթ ընդունեցին 1915 թ. գարնան վերջին: Այդ մասին քաղաքացիները տեղեկացան արդեն 1915 թ. հունիսի սկզբին Հիսն-Զեյֆից և Զերբուրանից մազապուրծ փրկված և այստեղ ապաստանած հայերից: Թեև այդ լուրերը նենգորեն հերքվեցին թրքական իշխանությունների կողմից, որոնք Միդիաթի ասորիների ղեկավարներին անվտանգության ստահող և կեղծ հավաստիացումներ տվեցին, այնուամենայնիվ վերջիններս ինքնապաշտպանության համար նախապատրաստական որոշ աշխատանքներ ձեռնարկեցին: Հունիսի վերջին իշխանությունները, անօրինական պահվող զենք փնտրելու պատրվակով, քաղաքում ձերբակալեցին 100-ից ավելի հայտնի ասորիների և այստեղ ապաստանած հայերի, որոնք դաժանաբար սպանվեցին որպես «խռովարարներ: Սա թուլացրեց դիմադրությունը՝ պայմանավորելով **Միդիաթի** ինքնապաշտպանության տապալումը: Քաղաքում դիմադրության, կարելի է ասել՝ միակ օջախը դարձավ **Ադոկա** (՝Adoka) տոհմի տունն ու այգին: Այնուհետև գետնափոր թունելներով, որոնք պաշտպանական նպատակներով բավական տարածված էին Տուռ-Աբդինում, կռվողներն անցան քաղաքից շուրջ 4 կմ արլ գտնվող **Մար-Աբրահամի** մենաստան, որտեղից՝ **Այն-Վարդո**: Միդիաթի շրջակայքում ինքնապաշտպանության մեկ այլ կենտրոն էր քաղաքի հյուսիսային հարևանությամբ գտնվող **Մար-Շարբեյի** (Շերբեյ) վանքը, ուր ապաստանած քաղաքացիները՝ 1 շաբաթյա կատաղի կռիվներից հետո, նույնպես տեղափոխվեցին **Այն-Վարդո**:

Առավել հաջող էին **Միդիաթի** գավառի մի շարք ավաններում և մենաստաններում ապաստանած բնակիչների կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը: Դրանում որոշակի դեր խաղացին ինչպես այդ բնակավայրերի համեմատաբար անառիկ դիրքը, այնպես էլ՝ տեղի վանքերի կամ եկեղեցիների պարսպապատ լինելը, ինչի շնորհիվ դրանք նաև յուրատեսակ ամրոցներ էին: Միդիաթի ասորական ինքնապաշտպանության առավել աչքի ընկնող կենտրոններն էին.

Այն-Վարդո (Վարդադքյուր). Գտնվում էր Միդիաթից շուրջ 15 կմ արլ: Քաղաքից և շրջակա գյուղերից այստեղ հավաքված 6000-7000 բնակիչ 1915 թ. ամռանը շուրջ 60 օր հերոսաբար հետ մղեցին թուրքական կանոնավոր զորամասերի և շրջակա քրդական աշիրեթների միասնական գրոհները՝ հաճախ ջարդարարների դեմ կազմակերպելով հաջող արտագրոհներ: Ինչպես վերև արդեն նշել ենք, տեղի մարտիկներն անգամ օգնության հասան **Միդիաթում** կռվողներին՝ շատերին տեղափոխելով ամրացված **Այն-Վարդո**: Ինքնապաշտպանությունն ավարտվեց զինադադարով, երբ թուրքական իշխանությունները «ներումն» հայտարարեցին: Սակայն ավանը մինչև Առաջին աշխահամարտի ավարտը մնաց այստեղ հաստատված բնակչության գլխավոր ապաստանը:

Բասբրին կամ Բասիբրինո. Միդիաթի և Մծբինի (Նիսիբին) գավառների սահմանագլխին գտնվող այս ավանում հավաքված շրջակա 6 գյուղերի բնակիչները (շուրջ 2000 կռվող), ծանր կորուստների գնով կարողացան հետ մղել քրդերի բազմակի կատարված գրոհները, անգամ ոչնչացրեցին վերջիններիս ցեղապետերից մեկին: 1915 թ. նոյեմբերին

427): Միջդեռ դարասկզբին (պայմանականորեն 1904 թ.)՝ փոխզնդապետ Տոմիլովի տվյալներով, Միդիաթի բնակչությունը կազմում էր 2000 տուն (նվազագույնը՝ 10000 մարդ, ընդգծումը մերն Է.Գ. Բ.): Տե՛ս Томилос, նշվ. աշխ., մաս 1, էջ 270-271: Նույնի՝ մաս 2, էջ 102-103:

իշխանությունների հայտարարած «ներումից» հետո բնակիչներն աստիճանաբար վերադարձան իրենց բնակավայրերը:

Դերսալիբ (հյր.՝ *Խաչավանք, Սբ Խաչ*). Մոտակա համանուն գյուղի բնակիչներն ամրանալով վանքում՝ շուրջ 3 ամիս (մինչև ուշ աշուն) դիմադրեցին հրետանիով զինված մեծաթիվ թուրքական կանոնավոր զորամասերին և քրդական աշիրեթներին՝ ծանր կորուստներ պատճառելով նրանց: Քրդերը և զորքերը հարկադրված էին հետ քաշվել: Բայց ավելի ուշ քրդերը, կրկին հարձակվելով, գրավեցին և վայրագաբար բնաջնջեցին գյուղի բնակիչներին՝ ավերելով նաև մենաստանը:

Յաբաբ (ասոր.՝ *Hbob, Ehvo*). Գտնվում էր Միդիաթից 25 կմ հվ-արևելք՝ լավ պաշտպանված Մար-Ելիյա (ասոր.՝ *Mor Eliyo, Սբ Եղիա*) վանքի հարևանությամբ: Վարչականորեն հարևան Մծբիևի (Նիսիբիևի) գավառակի կազմի մեջ մտնող գավառակի կենտրոնն էր (1890-ական թթ.՝ Միդիաթի կազմում): Նշված վանքն էլ դարձավ ինքնապաշտպանության գլխավոր կենտրոն, ուր ապաստանել էին շրջակա բնակավայրերից (անգամ՝ Միդիաթից) ապաստանած բազմաթիվ բնակիչներ: Դիմադրության մյուս կենտրոնն էր Յաբաբի Սբ Սարգիս (ասոր.՝ *Mor Sargis*) եկեղեցին: Օգոստոսի սկզբին հարակից քրդական աշիրեթների միացյալ զինված ջոկատները հարձակվեցին գյուղի վրա: 15-օրյա մարտերից հետո, երբ ասորի մարտիկներին հաջողվեց գերել քուրդ ցեղապետերից մեկին, վանքի և գյուղի պաշարումը դադարեցվեց:

Յախ կամ Յահ (Խախ). Տուռ Աբդիևի առավել նշանավոր և բազմամարդ բնակավայրերից էր: 7-րդ և 11-13-րդ դդ. ավանի հինավուրց Սբ Աստվածամայր եկեղեցին (ասոր.՝ *Yoldath Aloho*) երկրամասի եպիսկոպոսանիստն էր: Յախի շրջակայքում պահպանվել էին բազմաթիվ հոգևոր և աշխարհիկ հուշարձանների ավերակներ, որոնց շարքում առանձնանում էր «Յովհան արքայի պալատ» կոչվող հնավայրը, որի պահպանված պարիսպներն ինքնապաշտպանության ընթացքում ամրացվեցին և օգտագործվեցին դիմադրողների կողմից: Կոտորածների սկզբում Յախում ապաստանեց ավելի քան 2000 փախստական, որով տեղի կռվողների թիվը հասավ 200-ի: Օգոստոսի կեսերին թուրքական կանոնավոր զորամասերը և քուրդ աշիրեթները պաշարեցին ավանը: 45 օր շարունակ Յախի պաշտպանները հետ էին մղում թշնամու գրոհները: Ի վերջո, Մահալլեմի աշիրեթի շեյխի միջնորդությամբ կնքվեց զինադադար և պաշարումը վերացվեց:

Չարդարարներին համառ դիմադրություն են ցույց տվել նաև Անհալ, Բաթի, Բեթդեբե, Չազ, Յաբսնաս կամ Յասբսնաս, Միդուն (Մեդդի), Սալեհ (Սալահ) գյուղերի և Մար-Մալթե կամ Մար-Մելթոն մենաստանում ապաստանած բնակիչները²⁰⁸:

1915 թ. ցեղասպանության հետևանքով Միդիաթի (Տուռ-Աբդիև) հայ բնակչությունն իսպառ բնաջնջվեց: Իսկ ասորիների զանգվածային կոտորածները (ցեղասպանությունն ասորիները կոչում են *Sayfo*՝ ասոր. *sayf*-«սուր», «յաթաղան»)՝²⁰⁹ շարունակվեցին նաև հաջորդ տարիներին: Մասնավորապես 1917 թ., ուխտադրժորեն խախտելով իրենց իսկ հայտարարած զինադադարը, թուրքական իշխանությունները՝ կրկին հրահրելով քրդական աշիրեթներին, կոտորեցին իրենց բնակավայրերում վերահաստատված մեծ թվով ասորիների: Ասորի բնակչությունը ծանր կորուստներ ունեցավ նաև սովի և համաճարակների հետևանքով:

Տուռ-Աբդիևը պարբերաբար էթնիկական զտման է ենթարկվել նաև հետագա տասնամյակներին: Նոր կոտորածի անընդմեջ սպառնալիքը հարկադրել է վերապրած ասորիներ-

²⁰⁸ *Մենաստանը գտնվում էր Մծբիևի (Նիսիբիևի) գավառի սահմանագլխին և ինքնապաշտպանությանը հիմնականում մասնակցել են վերջինիս հյուսիսային Իգալայի լեռնային գյուղերի բնակիչները: Տե՛ս Gaunt, նշվ. աշխ., էջ 240-241:*

²⁰⁹ *Չարդարարների կողմից կոտորածների ժամանակ օգտագործվող հիմնական վեճի խորհրդանշական անվանումից:*

րի մեծ մասին զանգվածաբար տեղափոխվել այլևայլ երկրներ, հիմնականում՝ հարևան Սիրիա: 1987 թ. ասորական տվյալներով՝ Նախկին Միդիաթի գավառում ապրում էր ընդամենը 836 ընտանիք ասորի²¹⁰:

ԵՆԹ. Միդիաթի գավառում 1914 թ. գործել է 2 հայկական դպրոց՝ 210 աշակերտով:

ՄԾԲԻՆԻ (ՆԻՍԻԲԻՆ, ՆԻԶԻԲԻՆ, ՆՈՒՍԱՅԲԻՆ) ԳԱՎԱՌ

Դիարբեքիի վիլայեթի ամենահարավային գավառն էր՝ **Յարմաս** կամ **Ջախջախ** գետի ավազանում: Սահմանակից էր արևմուտքից՝ **Մարդինի**, հյուսիսից՝ պատմական **Իզալայի** լեռներով (ասոր.՝ Izolo կամ Izlo) **Միդիաթի**, արևելքից՝ **Ջեզիրեի** գավառներին, իսկ հարավից՝ **Չորի** (Դեյր-Չոր) ինքնուրույն սանջակին: Յայերը բնակվում էին միայն գավառի համանուն կենտրոնում, որը հնում **Յայոց Միջագետքի** կարևոր ռազմավարական նշանակությամբ հայաշատ քաղաքներից էր: Սակայն շրջակա ավազակախմբերի հաճախակի կրկնվող ասպատակությունները և բռնկված ժանտախտը 18-րդ դ. 2-րդ կեսին ամայացրեցին քաղաքը, ինչի հետևանքով բնակչությունը (հայ և ասորի) ցրվեց: Այդ ժամանակ էլ ավերվեց **Սբ Յակոբ Մծբնացու** (ասոր.՝ Mor Y'aqub) կիսագետնափոր և, Ղ. Ինճիճյանի խոսքերով՝ «մեծաշեն» 5-խորանանի եկեղեցին, որը տեղի հայերի և ասորիների խնամածության ներքո էր գտնվում: **Մծբինը** կրկին բնակեցվեց միայն 19-րդ դ. կեսերին: 20-րդ դ. սկ. քաղաքում ապրում էր շուրջ 8000 մարդ, որից ավելի քան 2600-ը կազմում էին հայերը (կաթոլիկ) և ասորիները (հակոբիկյան և քիլդանի): Գործում էր հայկական **Սբ Աստվածածին** եկեղեցին: Մծբինի (Նիսիբին) գավառում կար շուրջ յոթ տասնյակ ասորաբնակ գյուղ և ավան (շուրջ 20000 բնակիչ, գործում էին մի քանի ասորական մենաստաններ (նշանավոր էր Սբ Միքայելի վանքը, ասոր.՝ Mor Mixayil):

1915 թ հունիս-օգոստոս ամիսներին Մծբին քաղաքի և գավառի քրիստոնյա բնակչությունն անխնա բնաջնջվեց: Յազվագյուտ փրկված հայերն ու ասորիներն ապաստանեցին լեռնային Սինջարի (Շանգալ) եզրիաբնակ շրջանում: 1987 թ. Նախկին Մծբինի (Նիսիբին) գավառում մնացել էր ասորաբնակ ընդամենը մեկ տասնյակ գյուղ:

ՎԵՐԱՆՇԵՅԻՐԻ ԳԱՎԱՌ

Գրավում էր Դիարբեքիի վիլայեթի հարավարևմտյան հատվածը: Վարչականորեն Սևերակի սանջակի կազմում էր: Սահմանակից էր հյուսիսից՝ Սևերակի, արևելքից՝ Դերիկի և Մարդինի գավառներին, հարավից՝ Չորի (Դեյր-Չոր), իսկ արևմուտքից՝ Ուրֆայի ինքնուրույն սանջակներին: Յայ բնակչությունը գերազանցապես կենտրոնացած էր համանուն կենտրոնում (կոչվել է Նաև Ենիշեհիր, ասոր.՝ Tel-Mawzal)²¹¹: Անունը («ավեր քաղաք») առաջացել է եկել հնագույն Գորանոպոլիս բնակավայրի ավերակներից, որոնք գտնվում էին Նոր քաղաքի տարածքում²¹²: Մլան քրդերի հզոր ցեղապետ Իբրահիմ փաշայի կենտրոնն էր: Որոշ տվյալներով Առաջին աշխարհամարտի Նախօրեին ուներ շուրջ 6000-7000 բնակիչ²¹³, կեսից ավելին՝ հայեր և ասորիներ: Տարբեր տվյալներով Վերանշեհիրի հայ բնակչությունը՝ շուրջ 1650 մարդ (Ժ. Ռետորեի տվյալներով), կազմված էր առաքելական և կաթոլիկ համայնքներից²¹⁴: Գործում էին **Սբ Աստվածածին** (առաքելական) և **Սբ Յովհաննես Մկրտիչ** (կաթոլիկ) եկեղեցիները, դպրոցներ²¹⁵: Ընդ որում, հայ կաթոլիկական

²¹⁰ St' u "Der Verfolgung der Syro-Aramäer im Tur-Abdin 1915. Gesammelt von Erzpriester Sleman Henno aus Arkah", Bar Hebräus-Verlag, Holland, S. 149.

²¹¹ St' u Gaunt, նշվ. աշխ., էջ 267: Յմն. Ternon, նշվ. աշխ., էջ 98:

²¹² St' u "A Handbook of Mesopotamia", էջ 456:

²¹³ "Les missions catholiques", էջ 31: Յմն. "A Handbook of Mesopotamia", նույն տեղում:

²¹⁴ St' u Gaunt, նշվ. աշխ., էջ 267: Աղա Պատրոսի պատվիրակության կողմից Փարիզի վեհաժողովին ներկայացրած տեղեկագրի համաձայն Վերանշեհիրի ասորի բնակչությունը կազմում էր 2000 մարդ: Նույն տեղում:

²¹⁵ Դիարբեքիի (Տիգրանակերտի) առաջնորդարանի 1-ին տեղեկագրի տվյալներով Վերանշեհիրի հայերի թիվը 1339 էր: St' u Kévorkian, Paboudjian, նշվ. աշխ., էջ 400: Յմն. Kévorkian, Demographic Changes in the

Եկեղեցի էին հաճախում նաև քիլդանիները²¹⁶: Առանձին եկեղեցիներ ու դպրոցներ ունեին նաև կաթոլիկ ասորիները (եկ.՝ Սբ Եփրեմ, ասոր.՝ Mar Afrem) և հակոբիկյանները²¹⁷:

Վերանշեհիի գավառում հայաբնակ էր նաև պատմական **ԹԼԿՈՒՐԱՆ** (Թրկուրան) ավանը՝ գավառակենտրոնից շուրջ 20 կմ հս-արմ: Ս. Կարայանի հաշվարկներով բնակավայրում Առաջին աշխարհամարտի նախօրեին ապրում էր 60 տուն հայ բնակիչ²¹⁸: Թլկուրանի շրջակայքում ժամանակին բնակվել են մեծաթիվ հայեր, ինչի մասին են վկայում պահպանված առանձին հայահունչ անուններով գյուղեր՝ **Երեմի** (Yeremi), **Թլակ** (Tillak), **Խաչուկ** (Haçük), **Վանքուկ** (Vankürk), **Զարուկ** (Karük) ևն:

Ցեղասպանության տարիներին Վերանշեհիի գավառի հայերն ու ասորիները ենթարկվեցին Դիարբեքիի վիլայեթի իրենց հայրենակիցների ճակատագրին:

ԾՆԹ.: Վերանշեհիի գավառում 1914 թ. գործել է 2 հայկական դպրոց՝ 100 աշակերտով:

Гегам Бадалян, ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). Данная статья завершает исследование, посвященное историко-народному положению армянского населения вилайета Диарбекир накануне Первой мировой войны. В статье исследованы Вераншехирский уезд Северакского санджака, Джермукский уезд Аргана-Маденского санджака, а также Мидиатский и Мцбинский уезды Мардинского санджака вилайета Диарбекир.

Вследствие резни 1895-1896 гг. армяне указанных уездов понесли тяжелые потери (только в провинции Джермукском уезде около 1500 жертв). А в годы геноцида армянское население было почти полностью истреблено. Невосполнимые потери понесли также ассирийцы. Этот жестокий период ассирийской истории называется Safo. Отметим, что в ряде местностей Тур Абдина и Мцбина ассирийское население сохранилось благодаря героической самообороне.

Ключевые слова: Северак (Сеававерак), Караджадаг (Сев лер), Гадро (Буджак), Ошин, Джермук (Чермик), Чнкуш (Шенкуш), Сирааяц Сурб Аствацацин (Прекрасноликая Св. Богородица), Кескес (Кискис), Мидиат, Мцбин (Нисибин), Вераншеир (Горанополис).

Gegham Badalyan, HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). The article finishes the series of research on the historical-national situation of the Armenian population of the Diarbekir vilayet on the eve of the First World War. In the present article we examined the mentioned provinces Veransheir of the Severak sanjak, the province Jermuk of the Argana-Maden sanjak, as well as the provinces Midiat and Mtsbin of the Mardin sanjak.

During the massacres in 1895-1896 the Armenians of these provinces had severe losses (1500 victims only in Jermuk province). And in the years of Genocide the Armenian

Armenian Population of Diarbekir, էջ 269: «Les missions catholiques», էջ 31: «Բազմապէս», Վենետիկ, 1965, № 4-7, էջ 80:

²¹⁶ «Les missions catholiques», նույն տեղում:

²¹⁷ Տէ՛ս Gaunt, նշվ. աշխ., նույն տեղում: Հմմտ. Ternon, նշվ. աշխ., նույն տեղում:

²¹⁸ Տէ՛ս Karayan, նշվ. աշխ., էջ 143: Թլկուրանի մասին տե՛ս նաև Սահակեան, նշվ. աշխ., էջ 686-687:

population became almost fully extinct. The Assyrians also suffered terrible losses. That ferocious period is called *Sayfo* in the Assyrian history. It should be noted that the Assyrian population survived in some places of Tur Abdin and Mtsbin due to heroic self-defense.

Key words: Severak (Sevaverak), Karajadagh (Sev ler), Hadro (Bujagh), Hoshin, Jermuk (Chermik), Chnqush (Shenqush), Sirahayats Surb Astvatsatsin (Holly Mother of God), Keskes (Kiskis), Midiat, Mtsbin (Nisibin), Veransheir (Goranopolis).